Ճանաչի՛ր ինքդ քեզ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 23.11.2022թ. չորեքշաբթի թիվ 49 (1074)

Ուսանող

Ո՞վ է **ուսանողը**: Ելնելով բառից՝ *ուսումնական հաստատությունում ուսում ստացողը*: Ոչ միայն: Այն երիտասարդը կամ պարմանուհին, ով տվյալ ուսումնական հաստատությունում եւ դրանից դուրս իր տարիքային առանձնահատկություններին եւ տվյալ հաստատության ավանդույթներին համապատասխան՝ յուրատեսակ **միջավայրի** ստեղծողն է, մասնակիցը, իր կյանքի թերեւս ամենից հետաքրքիր հատվածը այդ միջավայրին անվերապահորեն նվիրողը: Եվ ոչ միայն:

Ուսանող **Խաչատուր Աբովյանն** իր դասախոսին ուղեկցել էր մինչեւ Արարատի գագաթը: Ուսանող **Դանիել Վարուժանի** դիմաքանդակը հավերժ մնաց Գենտի համալսարանի լսարաններից մեկում: Ուսանող **Ավետիք Իսահակյանը** դասեր էր առնում միաժամանակ մի քանի եվրոպական համալսարաններում... Եւ ո՞վ ուսանող չէր: Ո՞ր նշանավոր գրողը, նկարիչը, երաժիշտը, քաղաքական գործիչը, նույնիսկ պատանեկան տարիներից իր շնորհքը դրսեւորած, նշմարելի չի դարձել հասարակությանը հենց ուսանողական տարիներից:

Ուսանողներ էին **1965-ի ազգային զարթոնքի** ցույցի մասնակիցները: Ուսանողներ էինք **1978**-ին քաղաքացիական պատերազմի հետեւանքով լիբանանահայ համայնքին պատուհասված իրավիճակի կապակցությամբ ցույցի ելածներս... **1988**-ի փետրվարին մեկնարկած **շարժման** մասնակիցներից քանի՞սն էին ուսանող, եւ քանի՞ ուսանող իր կյանքը նվիրաբերեց 1992-94թթ. **Արցախյան ազատամարտին**... ու դրանից հետո... մինչեւ այսօր...

Ուրեմն՝ ո՞վ է ուսանողը. *ուսում ստացողը, յուրատեսակ միջավայր ստեղծողը, խիզախ ցուցարարը, հայրենիքի համար իր կյանքը զոհաբերողը*... Ընդհատենք թվարկումը: Որովհետեւ ուսանողը, բոլոր ժամանակներում, մեզ պատկերանում է որպես *հասարակության «ներքին այրման շարժիչը», ավանգարդը, ամեն նորին առաջինը նվիրվողը ու ամեն նորի համար կյանքի գնով մարտնչողը, մեկ արտահայտությամբ՝* ***ամենայն առաջավորի կրողն ու ներդնողը***...

Հզորանում է նաեւ մեր *«ներքին այրման շարժիչը»*, մեր *ավանգարդը* պատրաստվում է միայն իր *սերնդին վերապահված առաքելությանը*: **Ամենայն առաջավորի կրողն ու ներդնողը խիզախելու է մեր երազանքների իրագործումը:** Հավատա՛նք ուսանողին եւ օգնե՛նք, որ մնա ի՛ր **տեսակի** ու իր **երթի** մեջ:

Գ. Մ.

տե՛ս՝ նաեւ էջ 4

Խորհրդարան

Հիմնական ջանքերն ուղղված են մարդկային կապիտալի զարգացմանը

2023 թվականի բյուջեով ԿԳՄՍ նախարարության համար նախատեսվել է 250.03 միլիարդ դրամ, որը 23,5 միլիարդ դրամով ավելին է 2022 թվականի հաստատված բյուջեից: Այս մասին ՀՀ Ազգ ութերորդ գումարման չորրորդ նստաշրջանի հերթական նիստում նշել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը՝** *«ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին»* օրենքի նախագծի քննարկման շրջանակում ներկայացնելով ԿԳՄՍ ոլորտային հատկացումները:

շարունակությունը՝ էջ 2

Համակարգ

Ի նպաստ բարեփոխումների

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը** եւ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը** շնորհակալագրեր եւ դրամական պարգեւներ են հանձնել *«Տարվա լավագույններ 2022»* մրցույթում հաղթող ճանաչված ուսուցիչներին:

«Տարվա լավագույններ 2022» մրցույթին, ընդհանուր առմամբ, ներկայացվել է 185 հայտ. հաղթող է ճանաչվել 22 ծրագիր, որոնցում ընդգրկված է 33 մանկավարժ:

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը շնորհավորել է ուսուցիչներին եւ վստահեցրել, որ ՀՀ կառավարությունը մեծ տեղ է հատկացնում կրթությանն ու ուշադրություն դարձնում դրա բովանդակությանը:

շարունակությունը՝ էջ 3

Նախագիծ

Տարկետում՝ առաջնահերթ մասնագիտություններով

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ եւ կարեւորություն ներկայացնող մասնագիտություններով՝ համապատասխան բուհերում սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու կարգի եւ պայմանների նախագիծը:

Նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով *«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին»* օրենքում լրացումներ կատարելու մասինե օրենքում կատարված համապատասխան լրացումները:

Համաձայն կարգի՝ ԿԳՄՍ նախարարությունը մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ այնուհետ, որպես կանոն, յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ մինչեւ սեպտեմբերի 1-ը, պետական համապատասխան մարմիններին առաջարկում է նախարարություն ներկայացնել համապատասխան ԲՏՃՄ մասնագիտությունների ցանկը, որոնցում սահմանված կարգով ընդունվելը եւ սովորելը համարվելու է պետության համար առաջնահերթ եւ կարեւոր:

շարունակությունը՝ էջ 3

Դիմորդ-2023

Բուհերի ընդունելության առաջին փուլի հայտերը

Գնահատման եւ թեստավորման կենտրոնը դեկտեմբերի 15-ից սկսում է 2022-2023 ուստարվա շրջանավարտների պետական ավարտական եւ 2023 թվականի բուհերի ընդունելության քննությունների առաջին փուլի հայտագրումը:

Ավարտական քննություններ

Պետական ավարտական քննություններին մասնակցելու համար շրջանավարտը մինչեւ դեկտեմբերի 10-ը գրավոր դիմում է իր ուսումնական հաստատության տնօրենին: Պետական ավարտական քննություններ հանձնողների ցուցակ-հայտերը տնօրենը պետք է ուղարկի Գնահատման եւ թեստավորման կենտրոնի info@atc.am էլեկտրոնային հասցեին՝ դեկտեմբերի 15-ից 30-ը:

Միասնական քննություններ

Միասնական քննությանը մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) առցանց եղանակով Գնահատման եւ թեստավորման կենտրոնի dimord.am կայքէջում պետք է լրացնի ընդունելության դիմում-հայտ՝ նշելով առավելագույնը երկու միասնական քննություն: Դիմում-հայտը լրացնելու համար 2022-2023 ուստարվա շրջանավարտը պետք է դիմի իր ուսումնական հաստատության տնօրենին:

Նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2022-2023 ուստարվա շրջանավարտները, հանրակրթական դպրոցների եւ ՄԿՈԻ հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտները, ինչպես նաեւ օտարերկրացիները, օտարերկրյա ուսումնական հաստատությունների՝ տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ ՀՀ քաղաքացիները դիմում են իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված ուսումնական հաստատության տնօրենին:

Պահանջվող փաստաթղթեր

Ընդունելության դիմում-հայտը լրացնելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափի լուսանկարի էլեկտրոնային տարբերակը,

- անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը,

- ՀՀ ֆինանսների նախարարությունում Գնահատման եւ թեստավորման կենտրոնի 900018003401 հաշվեհամարին յուրաքանչյուր քննության համար փոխանցված 4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ վճարի անդորրագիրը:

Միասնական քննությունների վճարից ազատվում են՝

- պարտադիր ժամկետային ծառայությունից զորացրված անձինք,

- 1-ին եւ 2-րդ խմբերի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամները,

- ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,

- առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին համապատասխանաբար կցում են զինվորական գրքույկի պատճենը, հաշմանդամության տեղեկանքի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության եւ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրված տեղեկանքների պատճենները, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Բուհերի ընդունելության առաջին փուլի քննությունների դիմում-հայտերն ընդունվում են դեկտեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 25-ը:

ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

Հիմնական ջանքերն ուղղված են մարդկային կապիտալի զարգացմանը

սկիզբը՝ էջ 1

ԿԳՄՍ ոլորտային հատկացումները կկազմեն ավելի քան 250 մլրդ դրամ

Նախարարի խոսքով՝ միջոցների մեծ մասը հատկացվում է կրթության ոլորտին:

«Մարդկային կապիտալը մեր հիմնական ազգային հարստությունն է, եւ մեր ջանքերն ուղղված են դրա զարգացմանն ու բազմապատկմանը: Այդ գործում մեր նախարարությունը գլխավոր դերակատարներից մեկն է: Հաջորդ տարի ԿԳՄՍ նախարարության ընդհանուր բյուջեն կավելանա շուրջ 23,05 միլիարդ դրամով, որից 8 միլիարդը կուղղվի կրթության եւ սպորտի ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերին: Նախարարության համակարգման ոլորտներից առաջնայինը կրթությունն է, հատկապես՝ հանրակրթությունը: Կրթության ոլորտին հատկացվում է միջոցների մեծ մասը: Այս տարվա նկատմամբ աճը կազմում է 9,01 % կամ 16 միլիարդ դրամ, որն առաջնահերթ ուղղվելու է հանրակրթության ոլորտին»,- ասել է Վահրամ Դումանյանը:

2023 թվականի ծրագրով կնորոգվեն 70-ից ավելի դպրոցներ եւ 19 նախակրթարաններ

ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ շարունակվելու է ուսուցիչների մասնագիտական առաջխաղացումը խթանող քաղաքականությունը՝ ապահովելով դրան համապատասխան վարձատրություն:

Մասնավորապես՝

- 1,6 մլրդ դրամի հավելավճարներ կտրամադրվեն գյուղական համայնքներում մինչեւ 100 աշակերտ ունեցող դպրոցների 4418 ուսուցիչներին, որոնց վարձատրությունը, անկախ տարիֆիկացիոն ծանրաբեռնվածությունից, կհաշվարկվի 1 դրույքի չափով,

- 2,9 մլրդ դրամի լրացուցիչ հավելավճարներ կտրամադրվեն հանրապետության բոլոր դպրոցների բնագիտական առարկաների 8135 ուսուցիչներին՝ խրախուսելով նոր ուսուցիչների մուտքը դպրոցներ եւ լրացնելով առկա թափուր տեղերը,

- փոքրաթիվ աշակերտներով դպրոցներում կվերանայվի բազմահամակազմ դպրոցների սկզբունքը՝ տարբեր դասարանների երեխաների ուսումնառությունը միավորելով միայն արվեստի եւ ֆիզիկական կուլտուրայի դասաժամերին: Նմանօրինակ դպրոցներում աշխատող ուսուցիչներին 1 դասաժամի համար կտրամադրվի 50 կամ 70 տոկոսի չափ հավելավճար՝ կախված դասարանների թվից: Ծրագիրը կմեկնարկի Սյունիքի մարզից,

- 4 մլրդ դրամ կհատկացվի կամավոր ատեստավորման արդյունքների հիման վրա ուսուցիչների հավելյալ վարձատրության համար,

- 2,07 մլրդ դրամ կհատկացվի 100 դպրոցներում ժամանակակից ուսումնական լաբորատորիաների ձեռքբերմանը:

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ 2023 թվականին 70-ից ավելի հանրակրթական դպրոցներ կլինեն կառուցման, հիմնանորոգման եւ վերանորոգման փուլում, որից 4-ը՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ. դրանցում ներառված են նաեւ մարզադահլիճները: Նախնական արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում մինչեւ 2025 թ. նախատեսվում է եւս 5 նոր մասնագիտության ներդրում՝ աշխատաշուկայի պահանջներից ելնելով:

Կառուցման եւ նախագծման փուլում են 19 մոդուլային մանկապարտեզներ, որոնցից 9-ում աշխատանքները կավարտվեն այս տարի: Պետությունը կապահովի նաեւ սոցիալապես խոցելի խմբերի ավելի քան 17 հազար երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Արդյունքային ցուցանիշների հիմքով՝ 3 բուհերում կփորձարկվի նոր ծրագիր

Անդրադառնալով բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի ֆինանսավորմանը՝ Վահրամ Դումանյանը նշել է, որ այն կուղղվի խոցելի խմբերի երիտասարդների, այդ թվում՝ մարտական գործողությունների մասնակից սովորողների ուսման վարձի փոխհատուցմանը: Կշարունակվեն ոլորտային որակավորումների մշակման եւ ներդրման աշխատանքները:

«Աշխատանքներ կտարվեն արդյունքային ցուցանիշների հիմքով բուհերի ֆինանսավորմանն անցնելու ուղղությամբ, 3 բուհերում փորձնական կներդրվի այդ համակարգը»,- նշել է Վահրամ Դումանյանը եւ հավելել, որ նշված ուղղությունների համար լրացուցիչ կհատկացվի 25 միլիոն դրամ:

Արտերկրում կընդլայնվի հայագիտական կենտրոնների ցանցը

Օտարերկրյա պետություններում հայերենի եւ հայագիտական առարկաների դասավանդումը ներկայում իրականացվում է 9 պետությունների 11 կառույցներում, ծրագրում ընդգրկված են շուրջ 200 ուսանող եւ հետազոտող: Նախարարի խոսքով՝ նախատեսվում է այդ ծրագրի շրջանակը ընդլայնել՝ տարեկան ընդգրկելով 2 կառույց:

Գալիք տարի ծրագրին կմիանան Ալիկանտեի (Իսպանիա) եւ Բռնոյի (Չեխիա) համալսարանները:

Գիտության ոլորտի հիմնական ուղղությունները

Գիտության ոլորտում նախատեսված են հետեւյալ միջոցառումները՝

- գիտական կենտրոնների ժամանակակից սարքավորումներով վերականգնում,

- գիտական սարքավորումների համատեղ օգտագործման կենտրոնների ստեղծում եւ գիտական կենտրոնների վերանորոգում,

- գիտական կադրերի համապատասխան ատեստավորում,

- արտերկրի գիտնականների հայաստանյան գիտական տարածքում ինտեգրման դրամաշնորհային ծրագրերի իրականացում,

- հեռավար ղեկավարվող լաբորատորիաների հիմնադրում,

- արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման եւ որակավորման բարձրացման միջին ու երկարաժամկետ ծրագրերի իրականացում:

Ոլորտի զարգացման համար նոր եւ շարունակական միջոցառումներ իրականացնելու նպատակով 2023 թ. համար նախատեսվում է տրամադրել 29,8 միլիարդ դրամ, որը 16 տոկոսով ավելի է 2022 թվականի ֆինանսավորման ծավալից:

Նախատեսվում է թանգարանների նորոգում

Նախարար Վահրամ Դումանյանն անդրադարձել է նաեւ մշակույթի եւ սպորտի ոլորտներում իրականացվելիք աշխատանքներին:

«Մշակույթի ոլորտում շուրջ 1 մլրդ դրամի աճը կուղղվի երկու թանգարանի եւ մեկ պատկերասրահի հիմնանորոգման աշխատանքներին, ինչպես նաեւ հուշարձանների ամրակայմանը, նորոգմանը եւ հիմնանորոգմանը: Հավելյալ շուրջ 370 մլն դրամ կհատկացվի կինո, ֆոտո եւ ֆոնո հավաքածուի՝ միջազգային չափանիշներին հարիր թվայնացմանը, ինչպես նաեւ կինոնկարների արտադրությանը:

Կառուցվում են նոր մարզադպրոցներ

Սպորտի ոլորտում կապահովվի մարզածեւերի ազգային ֆեդերացիաների կողմից մարզիկների պատրաստումը, ՀՀ առաջնությունների անցկացումը, ինչպես նաեւ Օլիմպիական, Պարալիմպիկ խաղերին, Աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններին եւ միջազգային այլ մրցաշարերին մասնակցությունը: Բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկները, մարզիչները եւ բժիշկները դրամական աջակցություն կստանան պետության կողմից: 2023 թվականին Երեւանում կանցկացվի ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնությունը, ինչպես նաեւ կապահովվի ԱՊՀ խաղերին Հայաստանի պատվիրակության մասնակցությունը: Նախատեսվում է նաեւ 100 մլն դրամ արժողությամբ գույք հատկացնել ուսումնական հաստատություններին եւ մարզական ֆեդերացիաներին»,- ասել է Վահրամ Դումանյանը:

ԿԳՄՍ նախարարի փոխանցմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում առողջ ապրելակերպի գաղափարի արմատավորման նպատակով կշարունակվեն *«ՀՀ վարչապետի գավաթ»* խորագիրը կրող միջոցառումները՝ 5 մարզածեւերից անցկացվող մրցաշարերով: 2023 թվականին կավարտվեն Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի երկու մարզադահլիճների վերանորոգման աշխատանքները: Հաջորդ տարի կշարունակվեն նաեւ հեծանվային սպորտի եւ Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի, Արթուր Ալեքսանյանի անվան մարզադպրոցների կառուցման աշխատանքները:

Երիտասարդության ոլորտում

2023 թվականին նախատեսված են հետեւյալ միջոցառումները՝

- համայնքներում 2 երիտասարդական կենտրոնների ստեղծում,

- երիտասարդների իրազեկությանն ու կարողությունների զարգացմանն ուղղված ավելի քան 1 տասնյակ ծրագրեր,

- «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան պետական ներդրումային ծրագիր»՝ 2023 թվականի կատարողական ցուցանիշ սահմանելով 7935 շահառու ընտանիքներ:

2023 թվականին շուրջ 40 միլիոնով աճ է նախատեսվել նաեւ միջազգային համագործակցության եւ սփյուռքի աջակցության ծրագրերով, ինչը պայմանավորված է օտարերկրյա պետություններում հայերենի եւ հայագիտական առարկաների դասավանդման ցանցի ընդլայնմամբ եւ վերապատրաստվող սփյուռքահայ ուսուցիչների թվի աճով:

Ի նպաստ բարեփոխումների

սկիզբը՝ էջ 1

««Տարվա լավագույններ» մրցույթը ոլորտում ձեւավորված լավագույն ավանդույթներից է: Այս գործընթացում ամենակարեւորը մանկավարժական միտքը խրախուսելու, ստեղծարար աշխատանքը եւ նորարարությունն արժեւորելու գաղափարն է: Ես ուզում եմ առիթն օգտագործել եւ կոչ անել բոլոր մանկավարժներին՝ լինել ավելի ակտիվ եւ նախաձեռնող, ավելի արհեստավարժ, եւ պետության գնահատականը, վստահ եղեք, կլինի: Մենք գտնվում ենք զարգացման եւ բարեփոխումների ակտիվ փուլում: Ես ուզում եմ դիմել ձեզ խնդրանքով եւ կոչով՝ սիրելի՝ ուսուցիչներ, ձեր ցանկացած առաջարկ, որը կնպաստի բարեփոխումների գործընթացն առավել նպատակային եւ արդյունավետ դարձնելուն, մեզ համար չափազանց կարեւոր է: Հավատացեք՝ մենք դրա կարիքն ունենք: Խնդրում եմ ակտիվ եղեք եւ ձեր դրական օրինակը տարածեք դպրոցում, ձեր համայնքում ու քաղաքում»,- ողջույնի խոսքում ասել է նախարար Վահրամ Դումանյանը:

Նա նաեւ հավելել է՝ հնարավորությունների սահմաններում արվում է ամեն ինչ, որպեսզի ոլորտի զարգացումները նպաստեն ուսուցչի գնահատմանը եւ մասնագիտության առաջընթացին, ինչի օրինակներից է կամավոր ատեստավորման փորձնարկվող ծրագիրը:

Վահրամ Դումանյանը շնորհակալություն է հայտնել նաեւ *«Տարվա լավագույններ»* մրցույթի գնահատող հանձնաժողովի անդամներին՝ բոլոր հայտերը մանրակրկիտ ուսումնասիրելու, ստանձնած գործին պատասխանատվությամբ մոտենալու եւ անաչառության սկզբունքով լավագույններին ընտրելու համար: Գնահատող հանձնաժողովի կազմում, բացի նախարարության անդամներից, ընդգրկված են մասնագիտական կառույցների, մանկավարժական բուհերի, կրթական տարբեր կազմակերպությունների եւ աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը եւս շնորհավորել է հաղթողներին, շնորհակալություն հայտնել ցուցաբերած ակտիվության համար եւ առանձնահատուկ շեշտել, որ այս տարի, բացի հանրակրթական ուսումնական հաստատություններից, մրցույթին ակտիվ մասնակցել են նաեւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները, որը ոգեւորող է, քանի որ հենց այդ ոլորտում իրականացվում են բազմաթիվ բարեփոխումներ:

«Մենք պետք է նպաստենք, որպեսզի նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնակցությունը տարեցտարի ավելի շատ լինի մրցույթում: Պետք է այս համակարգում խրախուսենք նորարարական ու լավ գաղափարները, եւ մեկնարկած բարեփոխումները նպաստելու են դրան: Նախարարությունը սկսել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների հավաստագրման գործընթացը, առաջիկայում կմեկնարկեն նաեւ ՆՈՒՀ մանկավարժական աշխատողների վերապատրաստումները: Նախատեսում ենք էլ ավելի բարելավել մրցույթի ընթացակարգերը»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Այսպիսով՝ *«Տարվա լավագույններ»* մրցույթի **185** հայտերը ներկայացվել են հետեւյալ անվանակարգերում՝

- ***«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն»*** *անվանակարգում ներկայացվել է **144** հայտ, հաղթող է ճանաչվել **14** ծրագիր:*
- ***«Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն»*** *անվանակարգում ներկայացվել է **14** հայտ, հաղթող է ճանաչվել **3** ծրագիր:*
- ***«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր»*** *անվանակարգում ներկայացվել է **14** հայտ, հաղթող է ճանաչվել **2** ծրագիր:*
- ***«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն»*** *անվանակարգում ներկայացվել է **8** հայտ, հաղթող է ճանաչվել **2** ծրագիր:*
- ***«Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն»*** *անվանակարգում ներկայացվել է **4** հայտ: Այս անվանակարգում ոչ մի ծրագիր հաղթող չի ճանաչվել:*
- ***«Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր»*** *անվանակարգում ներկայացվել է **1** հայտ, հաղթող է ճանաչվել **1** ծրագիր:*

«Տարվա լավագույններ» մրցույթի ընդհանուր պարգեւատրման ֆոնդը կազմել շուրջ **11 միլիոն դրամ,** որը բաշխվել է բոլոր հաղթողների միջեւ:

Հաղթող ճանաչված **22** ծրագրային առաջարկներից **11**-ը եղել է անհատական, **11**-ը՝ խմբային: Գնահատման համար սահմանված էր նվազագույն շեմ՝ հանրակրթական ուսհաստատությունների համար՝ սկսած **63%**–ից, նախադպրոցական ուսհաստատությունների համար՝ **59 %**-ից:

Մրցույթի նպատակն է՝ խրախուսել հանրակրթական եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժներին, տնօրեններին եւ ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատակիցներին, նպաստել նրանց կողմից նոր նախագծերի իրականացմանը, ինչպես նաեւ տարածել առաջավոր փորձը եւ նպաստել հասարակության մեջ ուսուցչի հեղինակության բարձրացմանը:

Տարկետում՝ առաջնահերթ մասնագիտություններով

սկիզբը՝ էջ 1

Պետական համապատասխան մարմինները նախարարություն են ներկայացնում համապատասխան առաջարկ, որն իր մեջ ներառում է՝

- մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ցանկ,

- ըստ կրթական աստիճանների՝ տարկետման համար անհրաժեշտ տեղերի քանակ,

- հիմնավորում՝ ընտրված մասնագիտությունների եւ տարկետման համար հատկացվող տեղերի անհրաժեշտության վերաբերյալ,

- համապատասխան մասնագիտություններով սովորելու դեպքում ակնկալվող արդյունքը, պետության համար առաջնահերթությունը եւ կարեւորությունը փաստող հանգամանքները, ինչպես նաեւ ազդեցությունը ոլորտի զարգացման գործընթացում,

- առաջարկվող մասնագիտություններով սովորող կամ ավարտած ուսանողների մասնագիտական գիտելիքները հետագայում օգտագործելու կանխատեսվող շրջանակը եւ այն պայմանները, որոնք ուսումնառության ընթացքում կամ ուսումը ավարտելուց եւ տարկետումը վերջանալուց հետո պարտադիր է քաղաքացու համար,

- ասպիրանտական կրթական ծրագրի համար համապատասխան մասնագիտությունների առաջարկ ներկայացնելու դեպքում նաեւ ասպիրանտուրան ավարտելուց հետո քաղաքացիներին աշխատանքով ապահովելու երաշխավորագիր:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու համար ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված բուհերի համապատասխան մասնագիտությամբ ընդունվելու համար քաղաքացիները պետք է հավաքեն ընդունելության քնությունների առավելագույն միավորի առնվազն 75 տոկոսը:

Կառավարության որոշումը իր մեջ ներառում է՝ բուհերը եւ ըստ կրթական աստիճանի համապատասխան ԲՏՃՄ մասնագիտությունների ցանկը, ընդունելության տեղերի եւ տարկետման համար հատկացվող տեղերի տարբերության դեպքում տարկետման համար ընդունվողների մուտքային պահանջների, դրանց հավասարության դեպքում այլ պահանջների եւ առկա ուսուցմամբ ընդունվելու եւ հաջորդ կուրս փոխադրվելու հանգամանքը, ինչպես նաեւ տարկետում ստանալու համար սահմանված պայմանները ու քաղաքացու եւ համապատասխան մասնագիտության համար հայտը եւ երաշխավորագիրը:

Ներկայացրած պետական մարմնի եւ կազմակերպության միջեւ կնքվող պայմանագրով ամրագրվում է, որ քաղաքացին ասպիրանտուրան ավարտելուց եւ թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո պարտավորվում է 3 տարի ժամկետով աշխատել պայմանագրով նշված կազմակերպությունում՝ կատարելով գիտական, մանկավարժական կամ մասնագիտական աշխատանք:

Պայմանագրային պարտավորությունն ամբողջությամբ չկատարելու դեպքում քաղաքացին կամ երաշխավորագիր ներկայացրած կազմակերպությունն այն դեպքում, երբ հրաժարվում է քաղաքացուն ապահովել համապատասխան աշխատանքով, պարտավորվում է միանվագ վճարել ուսումնառության տարիների համար սահմանված ուսման վարձի հանրագումարի կրկնապատիկը: Պայմանագրում նախատեսված ժամկետում քաղաքացու կողմից հրաժարագինը չվճարվելու դեպքում դրա բռնագանձումն իրականացվում է դատական կարգով՝ տարկետման հայտ եւ երաշխավորագիր ներկայացված կազմակերպության կողմից, իսկ կազմակերպության դեպքում՝ նախարարության կողմից:

Հաջորդ կուրս փոխադրվելու հանգամանքը չբավարարելու դեպքում քաղաքացին կորցնում է տարկետման իրավունքը եւ ենթակա է պարտադիր զինվորական ծառայության՝ հայտարարված զորակոչի ընթացքում՝ բացառությամբ սահմանված կարգով ակադեմիական արձակուրդ ստանալը:

Տրված տարկետման ժամկետի ընթացքում ուսումնառությունը դադարեցվելու, ինչպես նաեւ փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացվելու դեպքերում ՀՀ պաշտպանության նախարարությունը ԿԳՄՍՆ է ներկայացնում քաղաքացու տվյալները, որոնց հիման վրա մեկամսյա ժամկետում Կառավարություն է ներկայացվում քաղաքացուն տրված տարկետումը դադարեցնելու մասին որոշման նախագիծ:

Քաղաքացուն յուրաքանչյուր կրթական ծրագրով ուսումնառության համար տարկետում կարող է տրվել մեկ անգամ: Տարկետում տրվում է համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ժամկետով՝ սակայն ոչ ավելի, քան մինչեւ քաղաքացու 27 տարին լրանալու օրը:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ դեկտեմբերի 4-ը կարող են նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախագիծ

Վարչատնտեսական կառավարումը իրավաբանական անձին պատվիրակելու կարգը

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի կառավարումն իրավաբանական անձին պատվիրակելու կարգի նախագիծը:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է *«Հանրակրթության մասին»* օրենքի պահանջից: Փաստաթղթով հստակեցվում է վարչատնտեսական կառավարումը իրավաբանական անձի պատվիրակելու հնարավորությունը՝ հասնելով իրոք մասնագիտացված ծառայությունների ստեղծման:

Հաստատության վարչատնտեսական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու համար իրավաբանական անձին կարող են պատվիրակվել առնվազն 3 հաստատության վարչատնտեսական գործառույթներ:

Իրավաբանական անձին կարող են պատվիրակվել պետական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը:

Վարչատնտեսական գործառույթների պատվիրակումը իրավաբանական անձին իրականացնում է լիազոր մարմինը՝ *«Գնումների մասին»* օրենքի պահանջներին համապատասխան:

Հաստատության վարչատնտեսական գործառույթների հիմնական ուղղություններն են՝ հաշվապահություն, գնումների գործընթաց. պայմանագիր, սննդի կազմակերպում, մաքրություն, անվտանգություն, ընթացիկ տեխնիկական սպասարկում:

Լիազոր մարմինը յուրաքանչյուր տարի՝ մինչեւ հունիսի 1-ը, իր ենթակայությամբ գործող ուսումնական հաստատությունների վարչատնտեսական ղեկավարներից ստանում է ուսումնական հաստատություններում վարչատնտեսական գործառույթները պատվիրակելու մասին հայտերը:

Լիազոր մարմնի կողմից վարչատնտեսական գործառույթների պատվիրակման դեպքում հաստատության վարչատնտեսական ղեկավարը հանդիսանում է գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանում եւ իրականացնում է *«Գնումների մասին»* ՀՀ օրենսդրությամբ պատասխանատու ստորաբաժանմանը վերապահված լիազորությունները:

Եզրակացության եւ ընդունման-հանձնման արձանագրության հիման վրա լիազոր մարմինը կարող է որոշում կայացնել՝ տվյալ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագիրի գործողությունը շարունակելու կամ այն լուծելու վերաբերյալ:

Իրավաբանական անձի կողմից իրեն պատվիրակված գործառույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում համակարգողը հիմնավորված առաջարկություն է ներկայացնում լիազոր մարմնին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն իրականացնող մարմիններին դիմելու համար:

Այն դեպքում, երբ վարչատնտեսական գործառույթներով սահմանված հիմնական ուղղություններից որեւէ մեկի պատվիրակման համար նախատեսված մրցույթը չի կայանում, չեղյալ է համարվում, հաղթող չի ճանաչվում, կամ դատական կարգով բողոքարկվում են մրցույթի արդյունքները, ապա այդ գործառույթի համակարգման աշխատանքներն իրականացնում է ուսումնական հաստատության վարչատնտեսական համակարգողը՝ մինչեւ օրենքով սահմանված կարգով այդ գործառույթի պատվիրակումը:

Անկախ պատճառներից՝ մրցույթը չկայանալու դեպքում պարբերաբար (առնվազն երկու ամիսը մեկ անգամ) հայտարարվում է մրցույթ, մինչեւ հաղթող ճանաչվելը:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ դեկտեմբերի 1-ը կարող են նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ ԴՈՒՄԱՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ

Սիրելի՛ ուսանողներ,

Ջերմորեն եւ բարի մաղթանքներով շնորհավորում եմ ձեզ՝ Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ:

Ուսանողներն ամբողջ աշխարհում հասարակության շարժիչ ուժն են, կարծրատիպերի դեմ պայքարների եւ հաղթանակների, փոփոխությունների ու նորարարությունների խորհրդանիշը: Դուք գտնվում եք կյանքի այն փուլում, որտեղ բացահայտում եք աշխարհը, ճանաչում կյանքն ու միջավայրը՝ որդեգրելով ձեզ համար կենսական եւ ուղենշային սկզբունքներ: Կրթության, գիտելիքի, իմացության անսպառ աշխարհում կերտելով ինքներդ ձեզ՝ առաջնային համարե՛ք նաեւ ձեռքբերումները՝դրանք ծառայեցնելով ի շահ պետության, ի նպաստ ձեր համայնքի ու միջավայրի վերափոխման: Կայացե՛ք եւ զարգացե՛ք ձեր ընտրած մասնագիտությամբ, ձգտե՛ք լավագույնին, դարձե՛ք լավագույնը. ձեզնից է կախված այս աշխարհն օր առաջ ավելի լավը դարձնելու առաքելությունը. դուք դա կարող եք:

Միշտ հիշե՛ք՝ պետությունը ձեր վստահելի գործընկերն է եւ ջանք չի խնայում՝ բարելավել ձեր կրթական իրավունքի իրացման պայմանները, գրանցել շարունակական աճ եւ բարձրացնել կրթության որակը: Սրան է միտված բարեփոխումների ողջ գործընթացը, որ իրականացվում է այսօր:

Սիրելի՛ ուսանողներ, մաղթում եմ ձեզ մշտապես փնտրելու, կրթվելու եւ ինքնակրթվելու ամուր կամք, մեծ երազանքներ ունենալու համարձակություն, սիրելու եւ նվիրվելու անսպառ եռանդ:

Բարին ընդ ձեզ:

Տարվա լավագույնները

Երկու ուսուցիչների առաքելության մասին

ԿԳՄՍ նախարարության *«Տարվա լավագույնները»* մրցույթի *«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն»* անվանակարգում պարգեւատրվողների լավագույն հնգյակում տեղ են գտել **Լուսինե Ղազարյանը** եւ **Հրանուշ Թորոսյանը**՝ *«Հային հայ պահող լեզուն ու մշակույթը սփյուռքում»* ծրագրով, որը կազմված է ինչպես անհատական, այնպես էլ համատեղ հեռավար դասընթացներից:

Ուսուցչուհիները գործընկերուհիներ են եւ աշխատում են 190-ամյա պատմություն ունեցող՝ Երեւանի Խ. Աբովյանի անվան հ. 2 հիմնական դպրոցում: Լուսինեն դասավանդում է կերպարվեստ, իսկ Հրանուշը դասվար է: Պետք է նշել, որ ուսուցիչները միայն այս գործունեությամբ չեն զբաղվում: Լուսինեն 2022թ. Օգոստոսի 26-ից *«Հույս եւ Ապագա»* հասարակական կազմակերպության վերապատրաստող—մասնագետն է, Ղազարյան նկարչական ստուդիայի հիմնադիր տնօրենն ու խմբավարը: Իսկ Հրանուշը ԿԳՄՍ-ի եւ ԿՏԱԿ-ի կողմից կազմակերպված բազմաթիվ վերապատրաստումների է մասնակցել: Երկու ուսուցիչներն էլ ունեն 1-ին աստիճանի տարակարգ: Այս տարի Լուսինեն մասնակցել է ուսուցիչների կամավոր ատեստավորմանը եւ հավաքել 78.9% :

Լուսինեն պատմում է, որ առաջին անգամ էին մասնակցում *«Տարվա լավագույնները»* մրցույթին եւ շատ ոգեւորված են հաղթանակով: Հաղթանակը պարտավորեցնող է եւ ոգեւորող, նոր հաղթանակների հետեւից տանող: *«Մեզ շատ դուր եկավ այս ձեւաչափը, երբ անհատական կամ խմբային եղանակով ուսուցիչները ներկայացնում էին իրենց ծրագրերը: Այս մրցույթի ընթացքում դու ազատ էիր ու կախված չէիր նախընտրություններից: Մրցութային հանձնաժողովը համեմատում էր ներկայացված բոլոր ծրագրերը եւ ընտրում լավագույնին, ինչը, համաձայնեք, հրաշալի է»,-* մրցույթի մասին իր տպավորություններով կիսվում է Հրանուշը: Մեզ հետ զրույցում ծրագրի հեղինակները պատմում են, թե ինչպես առաջացավ նման նախագիծ ունենալու միտքը: Ուսուցիչների խոսքով՝ ծրագրի միտքն առաջացել է COVID-19 համավարակի շրջանում, երբ իրենց աչքի առաջ ունեցել են մեծանուն գրող Վիլիամ Սարոյանի հետեւյալ խոսքերը.

«Մենք հաջորդ սերունդներին փոխանցում ենք ոչ թե արյուն, այլ գաղափարներ, եւ գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է հաջորդին սովորեցնել հայոց լեզու»: Լուսինեն ներկայացնում է, որ այսօր Սփյուռքում լուրջ խնդիր ունենք: Օտար ափերում բնակվող հայ եւ խառնածին ամուսնություններից ծնված ընտանիքներում հաղորդակցվում են օտար լեզվով: Այսպես կորցնում ենք մեր ազգային դիմագիծը, ինքնության ամենակարեւոր երաշխիքներից մեկը՝ լեզուն, մշակույթն ու արվեստը:

Հաշվի առնելով այս ամենը՝ ուսուցիչները համատեղ գործունեություն են ծավալել եւ Սփյուռքի հայկական գաղթօջախներում գտնվող հայ երեխաներին սովորեցրել մեր ոսկեղենիկ հայոց լեզուն ու ստեղծագործել՝ ծանթանալով հայկական կերպարվեստին եւ հայ վարպետների հրաշք գոհարներին:

Ըստ Հրանուշի՝ ծրագրի կարեւորությունը նրանում է, որ իրենք նախատեսել ենք օտար երկրներում ապրող հայ եւ խառնածին ամուսնություններից ծնված երեխաներին հայ պահել, սիրել տալ հայրենիքը, մշակույթը, կերպարվեստն ու հայոց լեզուն: Ստեղծել են հեռավար դասերի այնպիսի մոդել, որ երեխան հանգստյան օրերին ունենալով երկու հեռավար դաս, չձանձրանա եւ սիրով սովորի:

Ուսուցիչներն օգտվել են ԴՇՀ-ի դպրոցական դասագրքերի գրադարանից, հայկական Վիքիպեդիայի արվեստ եւ կերպարվեստ բաժնի իրենց կողմից ստեղծած հոդվածներից, մայրենիի թեմատիկ պլաններում (իրենց կողմից կազմած) միջին մակարդակի առաջադրանքներից, կերպարվեստի համար նախատեսված թեմատիկ պլաններից (իրենց կողմից կազմած): Ըստ կազմված ծրագրի ուսումնասիրել են հայոց այբուբենի տառերը՝ զուգահեռաբար ներկայացրել են կերպարվեստի ժանրերը, տեսակները: 2021 թվականի ամռանը, արդեն հայրենիքում, մասնակիցներից մեկը ծանոթացրել է Լուսիկ Ագուլեցու գործունեությանը, մասնակցել է թանգարանի կողմից կազմակերպված կրթական ծրագրին, որի ընթացքում ցորենի հասկերից պատրաստել է խաչբուռ, մասնակցել է Ղազարյան նկարչական ստուդիայի կողմից Նարեկացի արվեստի միությունում կազմակերպված ցուցահանդեսին, որտեղ ներկայացրել է մեկ նկար: Մասնակցել է Պատմության թանգարանի կողմից կազմակերպված հայկական տարազների ցուցադրմանը եւ թանգարանի կրթական ծրագրին, Շարամբեյանի անվան ժող արվեստի թանգարանում ձեւավորել է հայկական գորգագործական նախշերի օրինակ փայտի վրա:

Ուսուցիչները նախատեսում են հետագա տարիներին ծրագիրը ընդլայնել եւ էլ ավելի մեծ թվով սփյուռքահայ երեխաների սովորեցնել ազատ գրավոր եւ բանավոր հաղորդակցվել գրական հայերենով, կարդալ, հասկանալ, վերարտադրել պարզ գեղարվեստական եւ տեղեկատվական տեքստեր, ձեւակերպել տեքստի հիմնական գաղափարը, ճանաչել հայրենիքը, ճանաչել իր ընտանեկան, ազգային եւ քաղաքացիական պատկանելությունը, ներկայացնել տեղեկություններ՝ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին՝ բարձրացնելով սովորողների գեղարվեստական կրթության մակարդակը եւ նպաստել գեղագիտական, բարոյական դաստիարակության զարգացմանը: Հայաստանի համն ու հոտը ներկայացնել հայրենիքից հեռու գտնվող ընտանիքներին, որպեսզի մեր ազգն ու մայրենին հարատեւի, սերունդները կրթվեն ու դաստիարակվեն հայեցի, պահպանեն հայկական ինքնությունը: Օգտագործելով բոլոր հնարավոր հարթակները՝ ծրագիրը հասանելի դարձնել սփյուռքահայ երեխաներին:

Արցախ

Ապագայի ճարտարագետները

Օրերս Ստեփանակերտում կազմակերպվել է Արցախում գործող *«Արմաթ»* ճարտարագիտական աշխատանոցների միջեւ ռոբոտաշինության մրցույթ:

Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության *«Արմաթ»* ծրագրի արցախյան գրասենյակի համակարգող **Լիլիթ Սողոմոնյանի** տեղեկացմամբ՝ նման մրցույթ առաջին անգամ են անցկացնում Արցախում: Նպատակը՝ խմբավարների ու երեխաների միջեւ սերտ համագործակցություն եւ փորձի փոխանակում: Կարեւոր է նաեւ այս շարքի լաբորատորիաների գործունեության ներկայացումը տեղական կառավարման մարմիններին՝ նրանց գործուն աջակցության ակնկալիքով:

Մրցատյանի խոսքով՝ միջոցառումն ուղեկցվել է մասնակիցների ոգեւորված աշխատանքով:

Առաջին հորիզոնականում Ասկերանի էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի թիմն էր (խմբավար՝ **Տիգրան Ներսիսյան**):

Երկրորդ եւ երրորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են Մարտունու շրջանի Սոս եւ Նորշեն համայնքների միջնակարգ դպրոցների թիմերը (խմբավարներ՝ **Արման Դադասյան, Աննա Հարությունյան**):

Հաղթողների շարքում նվերներ են ստացել նաեւ մրցույթի բոլոր մասնակից դպրոցականներն ու նրանց խմբավարները:

Մցույթի հովանավորը ԱՀ կառավարությունն էր,իսկ գործընկերները՝ Համազգային հայ կրթական եւ մշակութային միության

արցախյան գրասենյակը, Ստեփանակերտի *«Պոլ Էլյուարի տուն»* ֆրանկֆոնիայի կենտրոնը:

«Հույս ունենք, որ «Արմաթը» նաեւ նման միջոցառումներով առավել ճանաչելի կդառնա հանրությանը եւ կընդգրկի ավելի շատ մասնակիցների»,- նշել է Լիլիթ Սողոմոնյանը:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

թ. Ստեփանակերտ, մեր սեփական թղթակից

Բարի լուր

Պատմական թռիչք

Ուրախությամբ հայտնում ենք, որ տեղի ունեցավ պատմական թռիչք: Հնդկաստանից Skyroot Aerospace կազմակերպության ենթածրային հրթիռով բաց տիեզերք ուղարկվեց *«Այբ»* դպրոցի աշակերտների նախագծած սարքը՝ (payload):

«Այբ»-ի նախագծային ուսումնառության ինժեներական ակումբի աշակերտների նախագծած 197 գրամանոց սարքը (payload) տեղադրվել է ենթաուղեծրային հրթիռում եւ բաց թողվել տիեզերք՝ մինչեւ 125 կմ բարձրություն, այսինքն հատել է տիեզերքի պայմանական սահմանը (Karman line): Սարքը տիեզերքում մնալու է 2-3 րոպե եւ այդ ընթացքում տվյալներ է հավաքելու հրթիռի թռիչքի հետագծի, ջերմաստիճանի եւ ճնշման փոփոխության, արագության, արագացման, ինչպես նաեւ ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության եւ օզոնի կոնցենտրացիայի մասին: Վերջին երկու չափումները կատարող տվիչները նախատեսվել եւ առաջարկվել են AYAS (Armenian Youth Aerospace Society) թիմի կողմից եւ ավելացվել են այդ թիմի հետ համագործակցության արդյունքում: Նախատեսված չափումներն իրականացնելուց հետո սարքը հրթիռի հետ միասին ետ է ընկնելու:

Սարքն ինժեներական ակումբի 2021-2022 ուսումնական տարվա նախագծի արդյունքն է: *«Այբ»* դպրոցի Ad Astra թիմի անդամներն են այժմ շրջանավարտներ **Անդրե Վարդանյանը, Էլինա Մելքոնյանը, Հայկ Փիլիպոսյանը** եւ 12-րդ դասարանցի **Դավիթ Վանյանը,** մենտորներն են ինժեներեկական ակումբի ղեկավարներն են **Վազգեն Գաբրիելյանը** եւ *«Այբ»*-ի շրջանավարտ **Ռուբեն Քերոբյանը:**

«Այբ» դպրոցի նախագծային ուսումնառության ինժեներական ակումբի Ad Astra թիմը դարձել էր 2022 թ. Քեմուրջյանի անվան համաերիտասարդական տիեզերքի մրցույթի հաղթող: *«Այբ»*-ի

աշակերտների նախագծած սարքը ուղարկվեց տիեզերք որպես մրցույթի հաղթող:

* * *

Նախագծային ուսումնառությունը *«Արարտյան բակալավրիատ»* կրթական ծրագրի առարկայացանկի տարբերակիչներից է, որը *«Այբ»* դպրոցում 2015 թ. ներդրված նորարարական կրթական մոդել է՝ հիմնված *«սովորել անելով»* սկզբունքի վրա: Այն կառուցում է ուսումնառությունը նախագծերի շուրջ: Այս ծրագրի շրջանակում աշակերտները կազմում են թիմեր եւ իրականացնում մեծածավալ, երկարաժամկետ նախագծեր, որոնք ուղղված են իրական համայնքային խնդիրների լուծմանը:

Սիրով՝ *«Այբ»* դպրոց

Նախագիծ

Հստակեցվել է հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման գործընթացը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը:

Համաձայն հիմնավորման՝ գործող կարգավորումներում նախատեսված չէ դասերը հեռավար իրականացնելու դեպքում ավարտական քննությունները հեռավար կազմակերպելու հնարավորությունը: Նոր կարգավորմամբ՝ նախատեսվել է դրույթ, համաձայն որի՝ կրթության շարունակականությունն ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել նաեւ այն դեպքում, երբ ուսուցիչն ունի առկա ուսուցումն անհնարին դարձնող բուժման կարիք, որի ժամանակ ուսուցչի կողմից իր դպրոցի սովորողների համար կարող է իրականացվել առավելագույնը 10 աշխատանքային օր տեւողությամբ հեռավար դասավանդում:

Նախագծով հստակեցվել է նաեւ, որ հեռավար ուսուցման ժամանակ 20 եւ ավելի աշակերտներից կազմված դասարանների դեպքում իրականացվում է դասարանների կիսում: Սահմանվել է, որ հեռավար դասերի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի տնօրենի հրամանով նշանակված պատասխանատուն:

Գործող կարգից հանվել են հեռավար ուսուցման համալիր կայքէջի լատինատառ հղումները, քանի որ հետագայում հնարավոր է հղումներում կատարվեն փոփոխություններ, որոնք իրավական ակտի հետ կառաջացնեն անհամապատասխանություն:

Այսպիսով՝ առաջարկվող փոփոխությամբ խնդրահարույց հարցերը պարզեցվել են, որոնց շնորհիվ՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման գործընթացը կիրականացվի ավելի հստակեցված ընթացակարգով:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ դեկտեմբերի 3-ը կարող են նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ Երեւանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- ՀՀ քաղաքացիությունը,

- ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Երեւանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում, ***2022 թվականի նոյեմբերի 23-ից մինչեւ դեկտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչեւ ժամը 16:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2022 թվականի դեկտեմբերի 22-ին՝ ժամը 10:00-ին,*** Երեւանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 39:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 44-38-04 հեռախոսահամարով: էլեկտրոնային հասցեն՝ terlemezyanart-college@gmail.com:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Ղուկասավանի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի աշխարհագրության (10 դասաժամ), բնագիտության (2 դասաժամ), ֆիզկուլտուրայի (9 դասաժամ), քիմիայի (8 դասաժամ), մաթեմատիկայի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 23-ից մինչեւ դեկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***դեկտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ղուկասավան, Արամի 39:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 05-04-61 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Արարատ գյուղի հ. 3 միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (18 դասաժամ), բնագիտության (2 դասաժամ), քիմիայի (6 դասաժամ), կենսաբանության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 23-ից մինչեւ դեկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***դեկտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղի հ. 3 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Արարատ, Խնկո-Ապոր 43:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 66-19-13 հեռախոսահամարով:

Աշխարհի հետ

Ժամանակակից սովորողի հիմնական կարողունակությունները

Աշխարհում կրթության բնագավառում փոփոխությունները 20-րդ դարի վերջին 21-րդ դարի սկզբից կայանում են կրթության ուղղությունների, նպատակների, բովանդակության փոփոխությամբ՝ ավելի հստակ կողմնորոշվելով դեպի անձի ազատ զարգացմանը, քննադատական մտածողության, ստեղծագործական նախաձեռնության զարգացմանը, մրցունակությանը եւ ապագա մասնագետների ճկունությանը: Այս առումով կրթության ոլորտում կարողունակություններ-ի վրա հիմնված մոտեցումը գնալով ավելի է արդիական դառնում:

Կրթական հիմնական, առանցքային կարողունակությունների ձեւավորման խնդիրն այսօր քննարկման առարկա է ամբողջ աշխարհում: Հայաստանում այժմ այդ խնդիրն առավել արդիական է՝ կապված հանրակրթության արդիականացման հետ:

21-րդ դարի սովորողը...

- դրսեւորում է ինքնատիրապետում,
- ունի գլոբալ տեղեկատվություն,
- հաղորդակցվող է,
- նորարար է,
- ունի ժամանակակից քաղաքացիական ներգրավվածություն,
- կարողանում է լուծել խնդիրներ,
- ունի ֆինանսական տնտեսական գրագիտություն,
- մեդիագրագետ է,
- համագործակցող է,
- ունի քննադատական մտածողություն:

Հանրակրթության նորմատիվ իրավական ակտի՝ Հանրակրթության պետական չափորոշչի մեջ կարողունակությունների ներդրումը հնարավորություն է տալիս լուծել հայկական դպրոցին բնորոշ խնդիրը, երբ սովորողները կարող են լավ տիրապետել մի շարք տեսական գիտելիքների, բայց զգալի դժվարություններ ունենալ այն գործունեության մեջ, որտեղ պահանջվում է կիրառել այդ գիտելիքները, կամ դժվարանում են առօրյա կյանքում հաղթահարել կոնկրետ խնդիրներ կամ խնդրահարույց իրավիճակներ:

Ներկայումս կարողունակություն հասկացության ընդհանուր ընդունված սահմանում չկա: Բոլոր սահմանումների համար ընդհանուր է դրա իմաստը՝ որպես տարբեր խնդիրներ հաղթահարելու անհատի ունակություն:

Առաջին անգամ *«կարողունակությունների վրա հիմնված կրթություն»* հասկացությունը (competence-based education) ձեւավորվել է 70-ականներին Ամերիկայում՝ Ն. Չոմսկու կողմից 1965 թ. (Մասաչուսեթսի համալսարան) առաջարկած *«կոմպետենցիա»* հասկացության ընդհանուր համատեքստում:

Լատիներենից թարգմանաբար կարողունակություն նշանակում է հարցերի շրջանակ, որոնցից անձը քաջատեղյակ է եւ ունի համապատասխան գիտելիքներ եւ փորձ:

Ըստ Գերման Սելեւկոյի՝ կարողունակությունը սուբյեկտի պատրաստվածությունն է՝ արդյունավետ կազմակերպելու ներքին եւ արտաքին ռեսուրսները՝ նպատակ դնելու եւ դրանց հասնելու համար: Ներքին ռեսուրսները հասկացվում են որպես գիտելիքներ, հմտություններ, կարողություններ, վերառարկայական հմտություններ, հոգեբանական առանձնահատկություններ, արժեքներ եւ այլն:

Կարողունակությունները կենդանի իրավիճակների եւ փորձի անդրադարձման (reflection) միջոցով ձեռք բերված որակներն են:

Բացահայտենք առհասարակ *«կարողունակություն»* հասկացության հիմնական բաղկացուցիչ տարրերը.

*- **գիտելիքը** փաստերի ամբողջություն է, որն անհրաժեշտ է աշխատանք կատարելու համար: Գիտելիքն ավելի լայն հասկացություն է, քան կարողությունը: Գիտելիքը ցույց է տալիս մարդու ինտելեկտուալ շրջանակը:*

*- **կարողությունը** որոշակի առաջադրանք կատարելու համար միջոցների եւ մեթոդների տիրապետումն է: Կարողությունների շրջանակը արտահայտվում է ֆիզիկական կարողություններից մինչեւ մասնագիտական կրթություն:*

21-րդ դարի կրթական մոդել



*- **հմտությունը** անձի կողմից յուրացված գործողությունների կատարում է, որը կատարվում է ձեռք բերված գիտելիքների եւ կարողությունների շնորհիվ: Այն ձեւավորվում է վարժությունների միջոցով եւ ստեղծում է գործողություն կատարելու հնարավորություն ոչ միայն ծանոթ, այլեւ անծանոթ պայմաններում:*

*- **ունակությունը** որոշակի առաջադրանք կատարելու բնածին հակում է: Ունակությունը մոտավորապես օժտվածության հոմանիշն է:*

*- **վարքագիծը** գործողությունների տեսանելի ձեւ է, որը ձեռնարկվում է առաջադրանքն իրականացնելու համար: Վարքագիծը ներառում է իրավիճակների ժառանգական եւ ձեռքբերովի արձագանքները: Մեր վարքագիծը արտացոլում է մեր արժեքները, էթիկան, համոզմունքները եւ արձագանքները մեզ շրջապատող աշխարհին:*

*- **արժեք** նշանակում է ինչ-որ բանի կարեւորություն, նշանակություն, օգուտ, օգտակարություն: Մակերեսորեն արժեքը հանդիսանում է որպես առարկայի կամ երեւույթի հատկություն: Սակայն, դրա նշանակությունը եւ օգտակարությունը սահմանված չէ կամ տվյալ առարկայի ներքին կառուցվածքի պատճառով է, այլ որոշակի հատկությունների սուբյեկտիվ գնահատական է, որոնք ներգրավված են մարդու սոցիալական գոյության ոլորտում, մարդը հետաքրքրված է դրանցով, կամ դրանց կարիքն է զգում:*

*- **հիմնական, առանցքային կարողունակությունները** իրենց բնույթով եւ կիրառելիության աստիճանով ամենաընդհանրական կարողունակություններն են: Դրանց ձեւավորումն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական առարկայի շրջանակում, եւ ըստ էության, դրանք վերառարկայական են:*

Կարողունակությունները պետք է տարբերվեն կրթական կարողունակություններից, այսինքն՝ այն կարողունակություններից, որոնք մոդելավորում են սովորողի գործունեությունը ապագայում նրա լիարժեք կյանքի համար:

Վաղ տարիքում երեխայի հմտությունների, սովորությունների, բնավորության գծերի, կարողունակությունների ձեւավորումը կատարվում է դաստիարակության գործընթացով՝ գիտելիքների փոխանցման միջոցով: Երեխայի նախնական, արդեն ձեւավորված կարողունակությունները ամրապնդվում եւ զարգացվում են նախակրթարաններում, ուսումնական հաստատություններում, անհատական փորձի ձեռքբերման, մասնագիտական գործունեություն ծավալելու միջոցով, առօրյա այլ իրավիճակներում եւ իրենց շարունակական զարգացումն են ունենում անձի ողջ կյանքի ընթացքում:

*- **կրթական կարողունակությունը** կրթական պատրաստվածության պահանջ է, որն արտահայտվում է որպես սովորողի փոխկապակցված իմաստային դիրքորոշումների, գիտելիքների, կարողությունների, հմտությունների ամբողջություն՝ անձնական եւ սոցիալական արդյունավետ գործունեություն իրականացման համար:*

*- **սովորողի կարողունակությունները** նրա ապագայի պատկերն են, յուրացման ուղեցույցը: Սակայն, ուսման ընթացքում նրա մեջ ձեւավորվում են այդ «մեծահասակներին» կարողունակությունների որոշակի բաղադրիչները, որպեսզի ոչ միայն նա պատրաստվի ապագային, այլեւ ապրի ներկայով, նա տիրապետում է այդ կարողունակություններին կրթական տեսանկյունից: Կրթական կարողունակությունները չեն վերաբերում բոլոր տեսակի գործունեություններին, որոնց մասնակցում է անձը, օրինակ՝ չափահաս մասնագետը, այլ միայն այն կարողունակություններին, որոնք ներառված են հանրակրթական ոլորտներում եւ ուսումնական առարկաներում: Այդպիսի կարողունակությունները արտացոլում են հանրակրթության ուսումնական գործունեության բաղադրիչը եւ նախատեսված են ապահովելու դրա նպատակների համընդհանուր ձեռքբերմանը:*

Կարելի է այսպիսի օրինակ բերել: Դպրոցում աշակերտը տիրապետում է քաղաքացիական կոմպետենտությանը, բայց ուսումն ավարտելուց հետո է դրա բաղադրիչներն ամբողջությամբ օգտագործում, հետեւաբար ուսման ընթացքում այդ կարողունակությունը հանդես է գալիս որպես կրթական:

Առանցքային կարողունակություններ. Եվրոպական տարբերակ.

Ուսումնասիրել.

- կարողանալ օգուտ քաղել փորձից,
- փոխկապակցել գիտելիքները եւ համակարգել,
- կիրառել ուսումնասիրության սեփական մեթոդներ,
- կարողանալ լուծել խնդիրներ,
- ինքնուրույն սովորել:

Գտնել.

- հարցումներ կատարել տարբեր տվյալների բազաներից,
- հարցումներ կատարել շրջապատից,
- խորհրդակցել փորձագետի հետ,
- տեղեկատվություն ստանալ,
- կարողանալ աշխատել փաստաթղթերի հետ եւ դասակարգել:

Մտածել.

- կազմել անցյալի եւ ներկա իրադարձությունների փոխհարաբերությունները,
- քննադատաբար վերաբերվել հասարակությունների զարգացման այս կամ այն կողմին,
- կարողանալ դիմակայել անորոշությանը եւ բարդությանը,
- քննարկումներում դիրքորոշում ունենալ, կողմնորոշվել եւ սեփական կարծիքը արտահայտել,
- տեսնել քաղաքական եւ տնտեսական միջավայրի կարեւորությունը, որտեղ սովորում եւ աշխատում է,
- գնահատել շրջակա միջավայրի հետ կապված սոցիալական սովորությունների ազդեցությունը առողջության վրա,
- կարողանալ գնահատել արվեստի եւ գրականության ստեղծագործությունները:

Համագործակցել.

- կարողանալ համագործակցել եւ աշխատել խմբում,
- որոշումներ կայացնել, հարթել տարաձայնությունները եւ կոնֆլիկտները,
- կարողանալ բանակցել,
- կարողանալ մշակել իրականացնել պայմանագրեր:

Գործել.

- ընդգրկվել նախագծում,
- լինել պատասխանատու,
- լինել խմբի կամ թիմի անդամ եւ նպաստել արդյունավետությանը,
- ցուցաբերել համերաշխություն,
- կարողանալ կազմակերպել իր աշխատանքը,
- կարողանալ օգտագործել հաշվողական եւ մոդելավորման սարքեր:

Հարմարվել.

- կարողանալ օգտվել տեղեկատվական եւ հաղորդակցական նոր տեխնոլոգիաներից,
- ցուցաբերել ճկունություն արագ փոփոխությունների դեպքում,
- ցուցաբերել տոկունություն դժվարությունների ժամանակ,
- կարողանալ նոր լուծումներ գտնել:

ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչի հիմքում 8 առանցքային կարողունակություններն են՝

1. լեզվական գրագիտություն
2. սովորել սովորելու
3. ինքնաճանաչողական եւ սոցիալական
4. ժողովրդավարական եւ քաղաքացիական
5. թվային եւ մեդիա
6. մշակութային
7. մաթեմատիկական եւ գիտատեխնիկական
8. տնտեսական կարողունակություն:

Հանրակրթության պետական չափորոշչում սահմանվում է *«կարողունակություն»* հասկացությունը եւ դրա բաղադրիչները՝

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության եւ դաստիարակության գործընթացում ձեռք բերված **գիտելիքի, արժեքների, հմտությունների եւ դիրքորոշումների** հիման վրա՝ ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձեւերն են: Կարողունակությունները ձեւավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձեւերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաեւ ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով եւ բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը կարող է հատկապես արդյունավետ լինել ուսուցման տեխնոլոգիական ժամանակակից համակարգերի մշակման համար: Այս մոտեցման էությունը վերառարկայական, անձի համար նշանակալի գիտելիքների եւ հմտությունների գերակայությունն է առարկայական գիտելիքների նկատմամբ: Իսկ փորձը ցույց է տվել, որ սոցիալապես ամենադապատացված մարդիկ պարզվում է, որ ոչ թե ակադեմիական գիտելիքներ, այլ անձնային որակների մի ամբողջություն՝ նախաձեռնողականություն, ձեռնարկատիրողականություն, գործին ստեղծագործական մոտեցում, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն ունեցողներն են:

Սիդա ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԿԳՄՍՆ կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոնի չափորոշչի լրամշակման եւ զարգացման բաժնի պետ

Մասնագիտական կրթություն եւ ուսուցում

«Հույս ունեմ, որ տարածաշրջանային քոլեջները կդառնան գերազանցության կենտրոններ»

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջը բազմագործառութային ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է նախնական/արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթություն, ինչպես նաեւ լրացուցիչ կրթություն՝ ըստ մասնավոր հատվածի կամ անհատների պահանջների: Քոլեջի կողմից իրականացվող բազմաթիվ զարգացման ծրագրերն ուղղված են մարզի երիտասարդների մասնագիտական կրթությանը: Միջին մասնագիտական ծրագրով քոլեջում ուսուցանվում են *«Հաշվապահական տեխնիկա եւ ավտոմատացված համակարգերի ծրագրերի ապահովում», «Իրավագիտություն», «Տուրիզմ», «Հաշվապահություն», «Ֆինանսներ»,* իսկ արհեստագործական ծրագրով՝ *«Խոհարարական գործ», «Փայտամշակում» եւ «Գինեգործություն»:*

Մեզ հետ զրույցում քոլեջի տնօրեն **Արգամ Դովլաթյանը** նշում է, որ քոլեջում ուսուցանվում են այնպիսի մասնագիտություններ, որոնք տվյալ պահին ունեն պահանջարկ եւ հնարավորինս համապատասխանում են աշխատաշուկայի ու մարզի զարգացման ուղղություններին: *«Ընդհանուր առմամբ՝ ունենք շուրջ 16 մասնագիտությունների լիցենզիաներ, որոնք տարիների ընթացքում փոփոխությունների են ենթարկվել՝ կախված աշխատաշուկայի պահանջարկից: Այսինքն՝ այս գործընթացը հնարավորություն է տալիս պարբերաբար եւ առանց խնդիրների արագ կողմնորոշվել մասնագիտությունների ցանկի փոփոխության հարցում»,-* նկատում է Արգամ Դովլաթյանը:

Նրա խոսքով՝ տարբեր կառույցների աջակցությամբ քոլեջում իրականացվում են նաեւ լրացուցիչ կրթություն եւ կարճաժամկետ դասընթացներ, որոնք հիմնականում կազմակերպվում են՝ ըստ ներկայացրած հայտերի, պետության կարիքի, մասնավոր հատվածի, ինչպես նաեւ առանձին անհատների պահանջի: Վերջիններս ցանկանում են կոնկրետ մոդուլ սովորել որեւէ մասնագիտության գծով:

«Աշխատանքային գործունեության ընթացքում անընդհատ նշվում է աշխատաշուկայի հետ համահունչ քայլելու խնդիրը, եւ, իհարկե, մենք ուսումնասիրում ենք այն՝ հնարավորիս հասկանալու, թե ինչ ուղղությամբ է զարգանում մարզում աշխատաշուկան եւ ինչ դինամիկա ունի: Ըստ դրա՝ կողմնորոշվում ենք մասնագիտությունների, ինչպես նաեւ զարգացման ծրագրերի հարցում, որոնք կախված են միջազգային կառույցների հետ համագործակցությունից: Մարզում հիմնականում զարգանում են գինեգործությունը եւ տուրիզմը՝ վերջերս ակտիվացել է նաեւ գյուղատնտեսությունը: Նպատակ ունենք բացելու նոր մասնագիտություններ՝ իհարկե, գործողներից որոշները փակելու հաշվին, քանի որ ոչ այդքան ռեսուրս կա, եւ ոչ էլ այդքան պահանջարկ»,- փաստում է քոլեջի տնօրենը: Նոր ներդրվող մասնագիտություններից մեկը, ըստ մեր զրուցակցի, ջերմատնային տնտեսությունն է: Այդ նպատակով ուսհաստատությունում բացվել է նորարարական լաբորատորիա՝ ակվապոնիկ համակարգով, որը հնարավորություն է տալիս իրականացնել տարբեր տեսակի փորձեր:

Արգամ Դովլաթյանը փաստում է՝ քոլեջում գինեգործությունը հաջողությամբ իրականացվում է 2018 թվականից, դուալ կրթական համակարգով: Ուսանողներն իրենց ուսման 70 տոկոսն անցկացնում են գործատուների մոտ՝ գործարաններում եւ այգիներում, այդ իսկ պատճառով ծրագրում ընդլայնվել է խաղողագործության մոդուլը, որպեսզի գինեգործները հնարավորություն ունենան մասնագետների մոտ պրակտիկա անցնելով՝ ստանալ համապատասխան հմտություններ:

Նրա խոսքով՝ դուալ կրթության շրջանակում շարունակվում է համագործակցությունը տարբեր կառույցների հետ, սակայն քոլեջի հիմնական գործընկերը հանդիսանում է GIZ-ը, որն աջակցել է ծրագրի կազմման, ներդրման եւ իրականացման ողջ գործընթացին: Նախորդ տարիներին կազմակերպության աջակցությամբ տեխնիկայով հզորացվել է գինեգործության լսարանը, որը տրամադրել էր *«Անուշավան եւ Օֆիկ Համբարձումյան»* հիմնադրամը: *«Հաջորդիվ արտադրել ենք սիմվոլիկ ծավալներով որակյալ գինի հենց քոլեջում: Ուսանողները հնարավորություն են ունեցել հենց տեղում իրականացնել արտադրություն, քանի որ գործարաններում պետք է զգույշ լինել՝ չփչացնելու մեր գործընկերների՝ մեծ ծավալների գինին, իսկ քոլեջում հնարավոր է փոքր ծավալով գինիների հետ տարբեր փորձեր կատարել: Ակնհայտ է, որ տեսնելով հաջող փորձը՝ գործատուներն են արդեն հայտ ներկայացնում մեզ հետ համագործակցելու, մինչդեռ նախկինում մենք էինք խնդրում, որ ուսանողները պրակտիկա անցնեն իրանց մոտ: Կոնկրետ գինեգործության մասով սա արդեն գնահատական է. վերջին երկու տարվա ընթացքում արդեն 3 ընկերություն համագործակցության առաջարկ է ներկայացրել: Վերջինը Թուֆենկյան ընկերությունն էր, որը հյուրանոց եւ գինու գործարան է կառուցում Արենի գյուղում, եւ մեր չորս ուսանողներ արդեն աշխատում են ընկերության այգիներում եւ դասերի մասնակցում»,-* փաստում է մեր զրուցակիցը:

Անդրադառնալով միջազգային եւ տեղական գործընկերների հետ իրականացված համատեղ ծրագրերին՝ Արգամ Դովլաթյանը կարեւորել է «Ուսանողական ընկերությունե փորձարարական ծրագիրը, որի աջակիցը *«Բինզես ընկերություն եւ գործընկերություն»* հիմնադրամն է: Քոլեջի տնօրենը վստահեցնում է՝ ծրագիրը շատ հետաքրքիր ակտիվություն ունեցավ՝ ուսանողները սովորեցին եւ պրակտիկայում յուրացրեցին այն

բոլոր հմտությունները, որը պետք է օգտագործեին քոլեջն ավարտելուց հետո, այսինքն՝ բացել կազմակերպություն, վարել դրա հաշվապահությունը, իրականացնել համապատասխան ծառայություն եւ այլն: «Իհարկե, հիմնականում խորհրդանշական ձեւով այն իրականացրեցին, սակայն այդ ամենը կատարվեց հավուր պատշաճի: Քոլեջը եւ հիմնադրամը տրամադրեցին համապատասխան նյութեր եւ տեխնիկա, իսկ ուսանողները կատարեցին դիզայներական, փայտամշակման եւ այլ աշխատանքներ: Often տուրիստական կազմակերպությունը նույնպես ուսանողական ձեռնարկություն է, որի հիմնադիր ուսանողները մասնակցել են *«Բիզնես եւ կրթություն գործընկերություն»* հիմնադրամի եւ *«Բիզնես եւ կրթություն»* ասոցիացիա ՀԿ-ի կողմից իրականացված *«Ամառային ճամբար/բիզնես դպրոց 2022» ծրագրին»-,* մեզ հետ զրույցում նկատում է Արգամ Դովլաթյանը:

Նա շեշտում է՝ այս տարի Հայ օգնության ֆոնդի եւ տարբեր այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ քոլեջը մեկ այլ ծրագրի շահառու է դարձել, որի շրջանակում մարզի երիտասարդների համար իրականացվել են ծրագրավորման դասընթացներ: Այդ նպատակով ուսհաստատությունը լրացուցիչ գերհզոր համակարգիչներ է ստացել, ինչպես նաեւ գինեգործական հավելյալ տեխնիկա, որն ապագայում հնարավորություն կտա քոլեջին օրենքով սահմանված կարգով լրացուցիչ ծատայություններ մատուցել:

Ծրագրավորման ոլորտում եւս քոլեջը մի քանի անգամ իրականացրել է կրթական կարճաժամկետ ծրագրեր՝ տարբեր կառույցների աջակցությամբ: Մայքորոֆթ ինովացիոն կետրոնն օրինակ բարձր մակարդակով դասընթաց է իրականացրել մարզի երիտասարդների համար: *«100-ից ավելի մասնակիցներից ընդունվեցին 70-ը դասընթացի ավարտին, իհարկե, քչերը մնացին, բայց նրանք ստացան համապատասխան կրթություն: Գյումրու տեխնոպարկի հետ նույնպես իրականացվել են ծրագրավորման դասընթացներ, այսինքն՝ պարբերաբար նման աջակցություններ են մատուցվում, որպեսզի կարողանանք լուծել բարձրակարգ մասնագետների խնդիրը, որը ՏՏ ոլորտում քանկ հաճույք է»,-* ընդգծում է մեր զրուցակիցը:

2020 թվականից քոլեջն ընդգրկված է Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից իրականացվող գերազանության կենտրոնների զարգացման եւ ճանաչման գործընթացում եւ բավականին առաջընթաց ունի: Արգամ Դովլաթյանի խոսքով՝ 2020-ին 7 կետերով նախնական գնահատում է իրականացվել՝ հասկանալու, թե քոլեջը ինչպիսի հնարավորություն ունի դառնալու գերազանցության կենտրոն: 1-ին կետով՝ կրթություն-բիզնես համագործակցություն, քոլեջը գնահատվել է զարգացող աստիճանով, մանկավարժություն եւ մասնագիտական զարգացում կետով՝ զարգացող, ինքնավարարություն, ինստիտուցիոնալ բարելավում, ռեսուրսներ՝ հասուն, ցկյանս ուսուցում ՄԿՈ-ներում՝ հասուն, խելացի մասնագիտացում՝ մոբիլացնելով նորարարությունը, էկոհամակարգ եւ ՓՄՁ-ներ՝ հասուն, արդյունաբերություն եւ թվայնացում՝ զարգացող, կանաչ անցում՝ աջակցելով կայուն զարգացման նպատակներին՝ զարգացող:

«Երկու տարի աշխատելուց հետո կրկին գնահատվել ենք՝ այս անգամ 9 կետերով. գնահատականը պարզ լինելուց հետո կհասկանանք՝ ինչ կարգավիճակում ենք եւ արդյոք մոտ ենք՝ համարվելու գերազանցության կենտրոն, սակայն հարցաշարը լրացնելուց արդեն պարզ էր, որ ահագին առաջընթաց ունենք: Խիստ կարեւորում ենք գերազանցության կենտրոնի գործընթացը, որի համար ժամանակ եւ լրացուցիչ ռեսուրսներ են հարկավոր՝ աշխատակիցներ եւ ծախսային առանձին հատված: Մեր լատվիացի գործընկերների փորձն ենք ներկայում ուսումնասիրում. երկու երկրների պատվիրակությունների փոխադարձ այց է կազմակերպվել, որպեսզի հասկանանք, թե գերազանցության կենտրոն ճանաչվելու դեպքում ներդրումային ծրագրերի շրջանակում ինչպիսի աջակցություն կարող ենք ունենալ»,- ընդգծում է մեր զրուցակիցը՝ հավելելով, որ Լատվիայում այդ կենտրոնները կայացել են՝ ֆինանսական մեծ աջակցություն ստանալուց հետո:

Նրա խոսքով՝ ի սկզբանե տարածաշրջանային քոլեջները նպատակ են ունեցել դառնալ գերազանցության կենտրոններ, որոնք պետք է մեծ դեր ունենային ՄԿՈ ոլորտի զարգացման հարցում: Արգամ Դովլաթյանը փաստում է՝ բավարար նյութատեխնիկական բազա ունեցող 4 տարածաշրջանային քոլեջ ներգրավված է այս ծրագրում՝ հույս հայտնելով, որ դրանք բոլորը կդառնան գերազանցության կենտրոններ եւ կապահովեն ոլորտի առաջընթացը:

Անդրադառնալով դասախոսների վերապատրաստման խնդրին՝ մեր զրուցակիցը նշում է, որ պարբերաբար իրականացվում են այդպիսի վերապատրաստումներ՝ ստանդարտ՝ ՄԿՈՒԶԱԿ-ի շրջանակում, ինչպես նաեւ լրացուցիչ՝ կարիերայի կենտրոնների աշխատակիցների համար: *«Համագործակցելով Եվրոպական կթական հիմնադրամի հետ՝ հնարավորություն ունենք մասնակցելու առցանց դասընթացների: Միակ խնդիրը օտար լեզվի տիրապետումն է, սակայն շատ ժամանակ օգնում են մեր անգլերենի մասնագետները: Կարեւոր է նաեւ տեղյակ լինել միջազգային գործընկերների հաջողված փորձին՝ հասկանալու, թե ինչ է հնարավոր տեղայնացնել մեր երկրում: Այդ առումով համագործակցում ենք եվրոպական տարբեր քոլեջների հետ եւ իրականացնում ակտիվ փորձի փոխանակում. վերջերս տեղի ունեցած պանելային քննարկմանը 50 երկրների համար ներկայացրել ենք մեր քոլեջի փորձը»,-* շեշտում է Արգամ Դովլաթյանը:

Նրա խոսքով՝ քանի որ քոլեջում գործում են կարիերայի եւ որակի ապահովման կենտոններ, պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվում մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ: Քոլեջի տնօրենը հավաստիացնում է՝ նրանք բոլորն էլ շահագրգռված են աջակցելու, ընդհուպ ունեն առաջարկ՝ խոհարարական գործը մյուս տարվանից իրականացնել դուալ համակարգով: *«Լսելով նրանց առաջարկները՝ մեր կրթական ծրագրերն անընդհատ քննարկման եւ փոփոխման մեջ են: Քոլեջի հաջողությունները մեծ են այն առումով, որ մարզի բոլոր կազմակերպություններում մեծամասամբ աշխատում են մեր շրջանավարտները, ընդ որում՝ բոլոր մասնագիտություններով: Ընդհանուր առմամբ՝ բարձր է քոլեջի շրջանավարտների՝ աշխատանք գտնելու տոկոսը՝ հիմնականում 65-75 տոկոս, իսկ ըստ իր մասնագիտության՝ 25-35 տոկոս»,-* մեզ հետ զրույցում նշում է Արգամ Դովլաթյանը: Սյունիք հասարակական կազմակերպության կողմից շատ կարեւոր ներդրում է արվելգ քոլեջում տեղադրվել են 15 կվտ հզորությամբ արեւային ֆոտովոլտային պանելներ եւ ըստ պայմանավորվածության մոտ ապագայում կսկսվեն դրա հետ կապված դասընթացներ իրականացնել:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Փոձի՛ր մտապահել

Բանաստեղծներն են հուշում

սկիզբը՝ «Կրթություն» թիվ 45

166) Տիեզերական տեսիլքներ

«Մշուշի միջից տեսիլ դյութական»:

Վահան Տերյան

Կ. Ցիոլկովսկին համոզված էր (*«Տեսիլքներ երկրի ու երկնքի մասին»*), որ մարդկությունը ոչ հեռավոր ապագայում կբնակեցնի Արեգակնային համակարգի այլ մոլորակներ եւ կսկսի թափանցել ավելի հեռուն-տիեզերքի խորքերը: Տեխնիկական դժվարությունները այդ ճանապարհին, Ցիոլկովսկու կարծիքով, կհաղթահարվեն: Մարդիկ կարող են Տիեզերք մեկնել առանց հատուկ սկաֆանդրերի, ինչը պարտադիր է ներկայումս տիեզերագնացների համար՝ բաց տիեզերք դուրս գալիս: Գիտնականը բացատրում էր, որ կենդանի արարածներն ու բույսերը, որոնք կուղարկվեն այլ մոլորակներ, չեն չորանա տիեզերական վակուումում եւ չեն վերածվի մումիաների՝ ջրի ակնթարթային գոլորշացման պատճառով, քանզի նրանք պատված կլինեն ապակեման թաղանթով՝ փափուկ ու նուրբ, բայց բացարձակապես անթափանց՝ գազերի, հեղուկների ու այլ թռչող մարմինների համար… Մարմինների մակերեւույթները, ոչ մեծ թեւանման հավելուկներով, կլուսավորվեն արեւից եւ կծառայեն իբրեւ լաբորատորիաներ՝ ուժերի եւ կյանքի համար: Եթե ծանրության միջավայրում այդպիսի հավելուկ կցորդները կարող են լինել բեռ ու նեղություն տվող հոգս, տարածության մեջ կլինեն աննկատ նույնիսկ մեծ չափերի դեպքում:

Տասնամյակներ են անցել Ցիոլկովսկու *«Տեսիլքներից»*, գիտությունը հսկայական ցատկեր է կատարել առաջ: Այսօր ոչ միայն ավտոմատ կայաններ են թռչում հեռավոր *«աշխարհների»* մոտով, այլեւ լրջորեն խոսում են այլ մոլորակներ (առաջին հերթին՝ Մարս) մարդկանց այցելությունների մասին: Իսկ Լուսնի վրա մարդը ոտք է դրել արդեն վաղուց…

Գիտնականների հատուկ հետաքրքրությունն է հարուցում նաեւ Յուպիտերի մի արբանյակը՝ Տիտանը: Վերջինս միակն է Արեգակնային համակարգի մոլորակների արբանյակներից, որ մթնոլորտ ունի: Այն տաս անգամ ավելի ծանր է Երկրի մթնոլորտից, բաղկացած է հիմնականում ազոտից եւ քիչ քանակությամբ՝ ջրածնից, մեթանից, ամիակից, խոնավ է, իսկ բուն արբանյակի քարե միջուկը, հավանաբար, պատված է ջրի եւ սառցի խառնուրդով: Շատ հնարավոր է, որ Տիտանի վրա լինեն նաեւ կյանքի պարզագույն ձեւեր. ախր ջերմաստիճանը եւ մթնոլորտային ճնշումն այդտեղ նման են այն պայմաններին, որ կային Երկրի վրա միլիարդավոր տարիներ առաջ:

Գիտնականները մեծ ծրագրեր ունեն՝ կապված Լուսնի հետ: Նրանք, օրինակ, ուզում են Լուսնի չերեւացող կողմում ունենալ ռադիոհեռադիտակներ. դրանք այդտեղ պաշտպանված կլինեն զանազան խանգարումներից, որ կան Երկրի վրա: Այդ դիտակները հնարավորություն կտան տիեզերքից ընդունել անսովոր բարձր զգայունությամբ ազդանշաններ: Հենց այդ՝ մեր մերձերկրյա տիեզերքի ամենահանդարտ անկյունում կարելի է իրականացնել արտերկրային քաղաքակրթության ազդանշանների որոնումներ եւ հասկանալ հեռավոր աստղերի անհավանական հզոր էներգաանջատումների պատճառները:

Լուսնային ապարները քառասուն տոկոսով թթվածնից են բաղկացած, որը դժվար չէ անջատել եւ, միացնելով Երկրից տարված թեթեւ ջրածնի հետ, ջուր ստանալ: Լուսնի վրա շատ է նաեւ կրեմնիումը (մակերեւույթային ապարների մոտ 20%-ը): Կիսահաղորդչային արեւային տարրերը, որ կարող են Արեւի լույսը միանգամից փոխակերպել էլեկտրականության, Լուսնի

ապագա բնակիչները կարող են պատրաստել տեղում…

Անօդ տարածությունը շարունակում է զբաղեցնել տեսաբան ֆիզիկոսների միտքը նաեւ ուրիշ պատճառներով: Ուսումնասիրելով տիեզերքում ընթացող ահռելի ուժգնության երեւույթները, նրանք հույս ունեն պարզել, թե ինչ է տեղի ունեցել աշխարհի հետ նրա ձեւավորման ամենավաղ փուլերում:

Փորձարարները յուրաքանչյուր տարրական մասնիկի համար գտել են իր հակամասնիկը՝ նույն զանգվածով, բայց հակադիր լիցքով: Հայտնաբերված է նաեւ անհիիլյացիայի երեւույթը՝ մասնիկների ու հակամասնիկների փոխադարձ ոչնչացումը իրար հանդիպելիս, ինչն ուղեկցվում է էներգիայի վիթխարի անջատումով. մեկ գրամ նյութի ու հականյութի փոխազդեցությունից անջատվող էներգիան համարժեք է միջին չափերի ատոմային ռումբի պայթյունի:

Ֆիզիկոսները միշտ ելնում են մեր աշխարհի, միանգամայն տրամաբանական՝ համաչափ լինելու պատկերացումներից: Որպես հետեւանք՝ պետք է որ հակամասնիկների թիվը հավասար լինի մասնիկների թվին, հականյութինը՝ նյութին: Բայց փորձով հիմնականում մասնիկներ են հայտնաբերվում: Մեր շուրջբոլորը միայն նյութ կա եւ չկա (հավանաբար, բարեբախտաբար) հականյութ: Տարօրինակ հակասություն է, որի ամբողջական պատասխանը, գուցե, տալու է բաց տիեզերքի աստղագիտությունը: Իսկ առաժմ բավարարվենք այսքանով. Մեծ պայթյունի ժամանակ, ինչից սկիզբ է առել մեր տիեզերքը, եւ որը տեւել է վայրկյանից շատ կարճ, մասնիկներն ու հակամասնիկները փոխադարձաբար ոչնչացրել են միմյանց, ու ծնվել են ֆոտոները: Բայց, այնուամենայնիվ (ո՞վ գիտե, թե ինչու), մասնիկները մի *«փոքր ավելի են եղել հակամասնիկներից (օրինակ՝ յուրաքանչյուր միլիարդ հակապրոտոնին բաժին է ընկել միլիարդ ու մեկ պրոտոն): Բայց այդ տարբերությունը բավարար է եղել, որ մասնիկները դառնան այս տիեզերքի «աղյուսիկները»:*

Իսկ տեսաբանները ցնցող այլ հայտարարություններ են անում: Օրինակ՝ Յա. Զելդովիչը եւ իր աշակերտները գտնում են, որ ամբողջ տեսանելի Տիեզերքը հեռավոր անցյալում կտեղավորվեր լիտրանոց բանկայի մեջ: Իսկ այսօր մենք ապրում ենք ընդարձակվող Տիեզերքում, ու պարզ չէ՝ դա անվերադառնելի պրոցես է, թե՝ բաբախող Տիեզերքի մի փուլ…

Ճառագայթման ֆոտոնները, որ ձեւավորվել են տաք ու խիտ պլազմայի մասնիկների ու հակամասնիկների պայթյունից, պետք է որ, *«վազելով»* ու աստիճանաբար սառելով, լցնեին ողջ Տիեզերքը: Եվ հետաքրքիրն այն է, որ այդ ֆոտոնները, որ կոչվել են մնացորդային ու գալիս են ամենահեռավոր ժամանակներից, հաջողվել է փորձով հայտնաբերել…

…Նկարում՝ առաջին հայ տիեզերագնաց, գնդապետ Զեյմս Բաղյանը: Նա նաեւ գիտնական է, ինժեներ եւ բժիշկ-կենսաբան, բազում հայտնագործությունների հեղինակ: 2022թ. սեպտեմբերին Զիմը առաջին անգամ եղավ Հայաստանում, մասնակցեց հայտնի աստղագետ Գարիկ Իսրայելյանի հիմնադրած՝ Սթարմուս գիտության ու արվեստի փառատոնին:

Գարիկ Իսրայելյանը Վ. Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի 2010թ. դափնեկիրներից է: Նրա գիտական խումբն առաջինը դիտումներով ցույց տվեց, որ գերնոր աստղերի պայթյուններից կարող են առաջանալ սեւ խոռոչներ: Նա նաեւ բացատրել է Արեգակի մթնոլորտում լիթիումի ցածր առկայությունը եւ այս փաստը կապել Արեգակնային համակարգում մոլորակների առկայության հետ:

167) Տարածված մոլորություններ տիեզերքի մասին

«Մոլորությունը ներելով մարդկանց՝ Հոգ տարավ նրանց փրկության մասին»:

Հովհաննես Թումանյան

«Ոչ հակակրանք, ոչ գայթակղություն մոլորություն: Արդյունքում՝

Միայն բյուրեղյա հետաքրքրասիրություն»:

Ջեֆերս Ռոբինսոն

1. Գիշերային երկնքում միլիոնավոր աստղեր են փայլում:

Իրականում, իդեալական պայմաններում, երկու կիսագնդերում մոտ 3000-ական աստղեր կերեւան: Այդ պայմաններից են, օրինակ, բարձր լեռները, որտեղ չկան լուսային աղտոտումներ:

Քաղաքային պայմաններում կտեսնեք 200-ից ոչ ավելի աստղեր, այն էլ՝ շատ պարզ երկնքում:

Ողջ Տիեզերքում գիտնականները հաշվում են 10^24 աստղեր, որ հնարավոր է եղել հայտնաբերել ժամանակակից դիտողական հնարավորություններով:

2. Տիեզերագնացները լողում են տիեզերանավում:

Մեզ թվում է, որ նրանք լողում են տարածության մեջ, ինչպես ջրավազանում է: Մինչդեռ նրանք շարունակական անկման մեջ են: Տիեզերանավը Երկրից հեռու է 350 կմ, եւ ձգողականության ուժն այնտեղ այնքան էլ տարբեր չէ Երկրի մակերեւույթին ունեցած արժեքից՝ ընդամենը 10%-ով է փոքր: Իսկ նման զգացողությունները կարելի է համեմատել թռչելիս ունեցած տպավորությունների հետ (օրինակ՝ պարաշյուտով, երբ արդեն թռել եք, բայց այն դեռ չի բացվել):

3. Արեւն այրվում է:

Շատերը կարծում են, որ Արեգակը պարուրված է կրակե լեզուներով: Իրականում Արեւը չի այրվում. այն էներգիա է ճառագայթում: Այրումը քիմիական ռեակցիա է, իսկ Արեգակի ընդերքում միջուկային ռեակցիաներ են, որոնց ժամանակ ջրածնի ատոմները, հսկայական ճնշումների պայմաններում, մխրճվում են միմյանց մեջ, առաջացնելով հելիում: Արդյունքում լույս ու ջերմություն է անջատվում, բայց ոչ մի կրակ այնտեղ չկա:

4. Աստղանավորդնե՛ր:

Տիեզերագնացները թռչում են Երկրից ոչ ավել, քան 400 կմ բարձրությունների վրա: Իսկական Տիեզերքը (այն էլ՝ դեպի աստղերը հասնող տարածությունները) նրանք նույնիսկ չեն էլ «հոտոտել»: Մեր «աստղանավորդները» մշտապես գտնվում են Երկրի էլեկտրամագնիսական դաշտի պաշտպանության ներքո: Իսկ այդ դաշտը տարածվում է մինչեւ 500 հազար կիլոմետր հեռուները:

Երկրի բնակիչը ավելի մոտ է Լուսնին, քան *«աստղանավորդը»* իսկական տիեզերական անհունին: Նույնիսկ կարելի է այսպես ասել՝ Երկրի ցանկացած բնակիչ ավելի շատ իրավունք ունի իրեն լուսնեցի անվանելու, քան տիեզերագնացը՝ աստղանավորդ: Նույնիսկ Լուսնի վրա տիեզերագնացը կզգա Երկրի էլեկտրամագնիսական դաշտի փրկիչ ազդեցությանը, իհարկե, շատ ավելի քիչ աստիճանով: Իսկ ավելի հեռուներում կոշտ տիեզերական ճառագայթումից ոչինչ չի պաշտպանի: Տիեզերանավը կդառնա միկրոալիքային վառարան: Ռադիացիան կոչնչացնի կենսաբանական օրգանիզմի բջիջները, իսկ անկշռությունը կփոխի սրտի աշխատանքը, անոթների եւ ներքին բոլոր օրգանների ներբջջային պրոցեսների վիճակն ու ընթացքը:

Տիեզերական անհունը իրական, շատ ցուրտ եւ բացարձակ սեւ ռադիոակտիվ միջավայր է: Այնտեղ չկա մթնոլորտ, չկա եւ անդրադարձող լույս: Տիեզերագնացն այնտեղ ոչինչ չի տեսնի: Ոչ մի երկրային կողմնորոշիչներ: Ոչ էլ աստղեր, համաստեղություններ: Գիտության այսօրվա մակարդակով տիեզերանավի ցանկացած, նույնիսկ ամենահզոր պաշտպանիչ միջոցները կործանումից չեն փրկի աստղանավորդներին:

Բայց երազելը մարդուն բնորոշ հատկություն է: Գուցե կա ելք, որ դեռ չգիտենք…



…Նկարում՝ Երեւանի գիտության եւ տեխնիկայի թանգարանում: Գիտությունն է ցրում մոլորությունները…

168) Արեգակի մեծ հանելուկը

«Մթամած օրերիս տանջանքում
Արեգակ տենչացի, եւ ահա,
Քո խավարն է փռված իմ հոգում,
Քո գգվանքը, եւ չար եւ ագահ…»:

Վահան Տերյան

Արեգակի մակերեւույթի ջերմաստիճանը մոտ 5710 Կ է: Իսկ նրանից 10000 կմ հեռու գտնվում է արեւապսակը. այն լուսավոր պսակ է Արեւի վերին մասում եւ ունի ճառագայթաձեւ արտաքին: Նրա ջերմաստիճանը հասնում է մոտ 1,5*10^7 Կ-ի. այստեղ ընթանում են պրոտոն-պրոտոնային ցիկլի ռեակցիաներ, որի արդյունքում չորս պրոտոններից առաջանում է հելիում եւ անջատվում հսկայական ջերմություն: Միջուկը միակ տեղն է, որտեղ էներգիան ու ջերմությունը ստացվում են ջերմամիջուկային ռեակցիաներից, աստղի մնացյալ մասը ջերմանում է այդ էներգիայից: Միջուկի ողջ էներգիան շերտ առ շերտ անցնում է մինչեւ լուսոլորտ, որտեղից էլ ճառագայթվում է լույսի ու կինետիկ էներգիայի տեսքով: Ուրեմն եւ՝ հարց է առաջանում՝ ինչպե՞ս կարող է լուսատուի մակերեւույթի ջերմաստիճանը անհամեմատ ավելի ցածր լինել, քան արեւապսակինը, ինչը շատ ավելի հեռու է միջուկից, քան լուսոլորտը:

Նախ՝ այն մասին, թե ինչու է արեւապսակը, նման մեծ ջերմաստիճան ունենալով հանդերձ, անզեն աչքով երեւում միայն Արեգակի լրիվ խավարման ժամանակ: Դա բացատրվում է նրանով, որ արեւապսակի խտությունը փոքր է, այդ պատճառով էլ՝ պայծառությունը մեծ չէ:

շարունակությունը՝ էջ 9

Բանաստեղծներն են հուշում

սկիզբը՝ էջ 8

Անզեն աչքով սովորական պայմաններում չի երեւում նաեւ լուսատուի ու պսակի միջեւ գտնվող, դարձյալ ոչ մեծ խտություն ունեցող գունոլորտը, որը Արեգակի արտաքին թաղանթն է եւ ունի 4.000-20.000 Կ ջերմաստիճան՝ կախված բարձրությունից (ընդ որում՝ 10.000 Կ-ից բարձր ջերմաստիճանների տիրույթը համեմատաբար մեծ չէ):

Հետեւաբար, ինչպե՞ս բացատրել բացարձակ ջերմաստիճանների նման պարադոքսալ բնույթը:

Կան մի քանի բացատրություններ: Դրանցից մեկի համաձայն, Արեգակի մակերեւույթից վեր կան հսկայական քանակության էլեկտրամագնիսական կառուցվածքներ, որոնք ունակ են, ծառերի նման, հազարավոր կիլոմետրեր հեռու *«քշել»* Արեգակի մակերեւույթին ձեւավորվող մագնիսական էներգիան: Համակարգչային մոդելավորումը ցույց է տալիս, որ այդ յուրօրինակ էլեկտրամագնիսական *«մացառուտները»* հասնում են արեւապսակ, որտեղ, միահյուսվելով, կուտակված էներգիան դուրս են ժայթքում՝ պսակը շիկացնելով մինչեւ այդպիսի բարձր ջերմաստիճաններ: Բացի այդ, վարկած կա, որ նույն կազմավորումները նաեւ արեգակնային բռնկումների պատճառ կարող են լինել:

Նույն երեւույթի մեկ այլ բացատրություն: Արեւապսակը լուսատուի մակերեւույթից մոտ 300 անգամ ավելի ջերմ է, որովհետեւ աստղերում մշտապես նման բռնկումներ կան: Դրանք սովորական բռնկումներից միլիարդ անգամ ավելի փոքր են, բայց իրենց մեջ ահռելի էներգիա են պարունակում, հավասար 10 մեգատոննա ջրածնային ռումբի: Գիտնականները ենթադրում են, որ նանոբռնկումները պայմանավորված են Արեգակի մակերեւույթում մագնիսական գծերի պտույտով ու ջարդվածքներով:

Հնարավոր է, որ պսակի տաքացման մեխանիզմը նույնն է, ինչ որ գունոլորտինը: Արեգակի խորքերից վեր բարձրացող կոնվեկտիվ բջիջները, որ լուսոլորտում երեւում են գրանուլների (հատիկների) տեսքով, հանգեցնում են գազի տեղային հավասարակշռության խախտման, որը բերում է ձայնային ալիքների տարածման տարբեր ուղղություններով: Միջավայրի խտության, ջերմաստիճանի, նյութի արագության քառտիկ փոփոխությունները փոխում են նաեւ ձայնային ալիքների արագությունները, հաճախությունները, լայնույթները, ընդ որում, դրանք կարող են այնքան շեշտակի լինել, որ գազի շարժումը դառնա գերձայնային: Առաջանում են հարվածային ալիքներ, որոնց ցրումն էլ տաքացնում է գազը:

Արեգակնային պսակի տաքացման մեկ այլ հնարավոր մեխանիզմ է Արեգակի կողմից աքսիոնների արձակումը, որոնք ուժեղ մագնիսական դաշտերում փոխակերպվում են ֆոտոնների: Աքսիոնը վարկածային մասնիկ է՝ դաշտի քվանտ, որը պետք է ծագի տարրական մասնիկների ֆիզիկայի մի համաչափության խախտման արդյունքում:

... Նկարում՝ արեւմտահայ աստղագետ Զատիկ Մուրադյանը (1930-2020): Նրա աշխատանքները վերաբերում են Արեգակի ֆիզիկային, մասնավորապես՝ գունոլորտից արեւապսակ նյութի արտահոսքի, տաքացնելիս հրվիժակների անհետացման, մագնիսական հոսքեր առաջացնող պինդ մարմնի պտույտ ունեցող տիրույթներին: Նրա բացահայտած *«Մուրադյանի էֆեկտը»* թույլ է տալիս շառավղային արագությունների միջոցով բացատրել Արեգակի վերին շերտում ընթացող երեւույթները: Նա է գտել արեգակնային քամու հիմնական պատճառը, հայտնաբերել, որ Արեգակի մթնոլորտի արագությունների դաշտը ստեղծում է Դոպլերի շեղում, որը նվազեցնում է օպտիկական խտությունը գծերի կենտրոնում:

169) Աշխարհի պատմությունը

Ոչ թե տիեզերքը գոյություն ունի ժամանակի մեջ, այլ ժամանակը՝ տիեզերքի

«Աստուած ստեղծեց տարածությունը, ... որ կոչեց երկինք: ... Աստուած ասաց. «Թող լուսատուներ լինեն երկնքի տարածության մէջ, որպէսզի լուսաւորեն երկիրը եւ իրարից բաժանեն գիշերն ու ցերեկը»: Եվ եղավ այդպէս»:

Աստվածաշունչ

«Առ քո թեւերին, տար ինձ,
ժամանակ,
Ես ետ մնալուց շատ եմ վախենում:
... Ակնթարթի մեջ դու կուլ ես տալիս
Այնպիսի մի նոր հավիտենություն,
Որ խոսքս հազիվ հասած բերանիս,
Դառնում է արդեն խորին հնություն»:

Համո Սահյան

Աշխարհի պատմությունն սկսվում է *«պլանկյան»* դարաշրջանից, որ տեւել է Մեծ պայթյունից հետո, 10^-43 վ: Մետագալակտիկայի ձեւական չափն այդ պահին եղել է 10^-35 մ, նյութի խտությունը՝ 10^97 կգ/մ^3, ջերմաստիճանը՝ 10^32 Կ: Բայց խտությունը եւ ջերմաստիճանը (ինչը մոլեկուլների միջին կինետիկ էներգիայի չափն է) պլանկյան ժամանակում վերացական հասկացություն են: Պոտենցիալ մասնիկները ճնշում չեն առաջացնում եւ չեն կազմում մոլեկուլներ. դրանք իրենց չեն դրսեւորում ոչ մի կերպ:

Ճնշումն ու ջերմաստիճանը հետո եղան. Մեծ պայթյունից 10^-35 վ հետո եռացող վակուումից ծնվեցին հիմնարար մասնիկները՝ էլեկտրոններ, նեյտրինո, քվարկներ, գլյուոններ, ֆոտոններ: Նյութի անցման պատճառը իրական ձեւերի՝ տարածության ընդարձակումն էր: Համաձայն անորոշությունների առնչության՝ ինչքան մեծ է ծավալը, այնքան քիչ զանգված կարող է այնտեղ գտնվել պոտենցիալ վիճակում:

Իրական մասնիկները փոխազդում են, կառուցվածքներ ստեղծում: Հադրոնային դարաշրջանը, երբ *«գլյուոնային սոսնձով»* քվարկները *«ծանր»* մասնիկներ կազմավորեցին՝ պրոտոններ, նեյտրոններ, սկսվել է պայթյունից ու մաքուր էներգիայի փոխակերպումներից 10^-6 վ հետո: Եվս երեք րոպե հետո ջերմաստիճանն ընկել է այնքան, որ հնարավոր է դարձել միջուկների սինթեզը: Այդ ժամանակ են առաջացել ջրածնից հետո եկող տարրերի միջուկները՝ հելիումը, լիթիումը, բորը: Բայց ռեկոմբինացիան՝ միջուկների կողմից էլեկտրոնների զավթումը եւ ջրածնի ու հելիումի ատոմների առաջացումը, տեղի է ունեցել միայն 380 հազար տարի անց: Երիտասարդ տիեզերքը լցվել է փայլող, շիկացած գազով: Նախաստեղծ ջրածնի ջերմությունը մենք այսօր զգում ենք որպես մնացորդային ճառագայթում, որ գալիս է Մետագալակտիկայի սահմաններից (դա Տիեզերքի տեսանելի մասն է, որի զանգվածը գնահատվում է 10^62 կգ): Մինչ այդ՝ քվարկ-գլյուոնային դարաշրջանում, լույսը կար, բայց տիեզերքը թափանցիկ չէր ճառագայթման համար՝ ճիշտ այնպես, ինչպես իրականում մութ են աստղերի ընդերքը:

Միաժամանակ, լույսի հետ միասին, երեւան եկավ նաեւ գրավիտացիան, որ նախկինում չկար. տարածության մեջ մատերիայի բաշխումը հավասարաչափ չէր, եւ ձգողության ուժերը յուրաքանչյուր կետում փոխադարձաբար չեզոքացնում էին իրար: Այժմ արդեն հավասարակշռությունն անկայուն էր: Պատահական ֆլուկտուացիայով սկսված նյութի խտացումը սկսում է աճել, ինչպես ձնագունդը:

Տիեզերական գազի ամպը կցրվի ներքին ճնշմամբ, թե՝ այն կսկսի սեղմվել գրավիտացիայի ազդեցությամբ՝ կախված է նյութի ջերմաստիճանի ու զանգվածի հարաբերությունից: Ռեկոմբինացիայի դարաշրջանում ջրածինը դեռեւս շատ տաք էր, եւ նախանյութի անընդհատ դաշտը, պտտվելով, սկսեց բաժանվել ահռելի *«կարկանդակների»*: Շատ ավելի ուշ այդ բաժանումը, որ ներկայումս դիտվում է մնացորդային ճառագայթման աննշան ֆլուկտուացիայով, հանգեցրել է ներկայիս տիեզերքի *«բջջային»* կառուցվածքին, որի դրսեւորումն այն է, որ գալակտիկաների գերկույտերի հատվող հարթությունները բաժանված են տիեզերական վակուումով:

... Նկարում՝ Հ. Այվազովսկու ***«Քաոս. Աշխարհի արարում»*** հռչակավոր կտավն է: *«Մտա մի նորեկ պատկերասրահ, ալեկոծ ծովը խուժեց ինձ վրա, ետ-ետ քաշվեցի, ասես սարսափած, օ՜ վսեմ վայրկյան, արվեստից խաբված»:* Այս տողերը գրել է Հռոմի պատկերասրահներից մեկում, Հովհաննես Այվազովսկու ցուցադրված կտավներից հիացած ու խենթացած անգլիացի ծովանկարիչ Ուիլյամ Թյորները:

170) Բռնկվող աստղեր

«Երբ աստղը՝ մի պահ դառնալով
անտես,
Վառվում է հանկարծ:
Երբ տիեզերքը աղոթք է կարծես՝
Հոգու մեջ հանգած»:

Եղիշե Չարենց

Բռնկվող աստղերը փոփոխական աստղեր են, որ կտրուկ եւ ոչ պարբերաբար փոխում են իրենց փայլը: Նման աստղերը կազմում են Գալակտիկայի աստղերի նշանակալից մասը: Առաջին բռնկվող աստղը հայտնաբերվել է 1924թ.-ին, երբ Ողնուցի համաստեղության մեջ լուսանկարներում հայտնաբերվեց թույլ կարմիր աստղի բռնկում: Դրանց դասը առ այսօր աստղագիտության ամենահետաքրքրաշարժ օբյեկտներից են:

Բռնկվող աստղերն ունեն երեք բնութագրիչ առանձնահատկություններ. փայլի ճողփյունի պատահական բնույթ, հզոր գունոլորտ ու պսակ, բծավոր լուսոլորտ:

Բռնկվող աստղերի անկայունության երեւույթների ուսումնասիրման ասպարեզում մեծ է Բյուրականի գիտնականների վաստակը: Մի քանի փաստեր միայն:

1. Բազումք աստղակույտի բռնկվող աստղերի մի քանի բռնկումների առաջին միաժամանակյա դիտումները երկգույն ճառագայթներում երկու աստղադիտակներով, կատարվել են Բյուրականի աստղադիտարանում: Հետագայում բռնկումների միաժամանակյա եռագույն դիտումներ իրականացվեցին Օրիոնի աստղաստիւռի եւ Բազումք աստղակույտի բռնկվող աստղերի դեպքում:

2. Բռնկվող աստղերի բռնկումների էլեկտրալուսաչափական դիտումների վիճակագրական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրանց հաջորդականությունը յուրաքանչյուր աստղի մոտ բավականաչափ լավ կարելի է ներկայացնել պատահական մեծությունների բաշխման Պուասոնի օրենքով:

3. Վ. Համբարձումյանը ցույց տվեց, որ ցածր լուսատվության ու փոքր զանգվածով բոլոր կարմիր աստղերն իրենց երիտասարդության ընթացքում անպայման անցնում են բռնկումային փուլով: Էլմա Պարսամյանը մշակեց մի մեթոդ, որը թույլ է տալիս աստղաստիւռի կամ աստղակույտի տարիքը որոշել, օգտագործելով այդ համակարգերում առկա բռնկվող աստղերի բռնկումային ակտիվությունը:

4. Անկայուն աստղերի հազվագյուտ տիպ են ֆուորները, որոնք գտնվում են աստղային էվոլյուցիայի սկզբնական փուլում: Դրանք գերհսկաներ են, շրջապատված փոշով ու միգամածություններով: Սրանց տեսանելի ճառագայթման հզորությունը զարգացման որոշ շրջանում մոտ մեկ տարվա ընթացքում անընդհատ աճում է ավելի քան հարյուր անգամ, որից հետո մնում է գրեթե անփոփոխ: Ելնելով ֆուորի երիտասարդ տարիքից ու նախաստղային նյութի՝ իր առաջարկած վարկածից, Վ. Համբարձումյանը տվել է ֆուորի երեւույթի մի հավանական բացատրություն:

...Մեր այս փոքրիկ զրույցը՝ բռնկվող աստղերի մասին, շարունակենք հայ հանճարների խոսքով՝ մեջբերումներ անելով Վիկտոր Համբարձումյանի ու Գրիգոր Գուրզադյանի մտքերից:

«Աստղային անկայունության հզոր դրսեւորում է բռնկումը՝ աստղի փայլի ինքնաբուխ, կարճաժամկետ, բայց շատ արագ եւ ուժեղ մեծացումը օպտիկական ճառագայթներում: Աստղային բռնկման երեւույթն ունի կոսմոգոնիկ՝ տիեզերածնական նշանակություն: Բռնկումը նախ սերտորեն կապված է աստղի ներքին կառուցվածքի եւ ներաստղային էներգիայի բնական աղբյուրների հետ, եւ հետո՝ հիմնական միջոց է աստղի ավելցուկային էներգիայից ազատվելու համար՝ աստղի ծեւավորման եւ էվոլյուցիայի ճանապարհին: Բռնկումն ունի համալիքային բնույթ. այն ընդգրկում է ոչ միայն օպտիկական տիրույթը, այլեւ՝ ռադիո, ուլտրամանուշակագույն եւ ռենտգենյան ճառագայթները: Դա նշանակում է, որ բռնկման պահին պետք է հայտնվեն հսկայական քանակի էներգիական մասնիկներ՝ ռելյատիվիստիկ էլեկտրոններ, աստղի չափերը մեծապես գերազանցող տարածության մեջ»:

շարունակությունը՝ էջ 10

Բանաստեղծներն են հուշում

սկիզբը՝ էջ 9

Գաճաճ ոչ ստացիոնար աստղերի եւ անոմալ միգամածությունների բռնկումների բնության, անընդհատ առաքման իմացության նոր փուլն սկսվում է 1954թ.-ից, երբ Վ. Համարձումյանն այն ժամանակ հայտնի դիտողական նյութերի մանրակրկիտ վերլուծության արդյունքում եկավ եզրակացության, որ աստղի կողմից լրացուցիչ էներգիայի արձակման բոլոր նման դեպքերը չեն կարող ունենալ ջերմային բնույթ: Ընդ որում, հատկապես ընդգծվում են երկու հանգամանք. աստղի փայլի աճի բացառիկ բարձր տեմպը եւ շատ կարճ ժամանակում աստղի ճառագայթած էներգիայի շատ մեծ քանակը:

… Վ. Հ. Համբարձումյանը բացառում է նաեւ բռնկումներում մեզ հայտնի տիպերի միջուկային երեւույթների ընթացքը եւ համարում է, որ նրանք *«իրենց բնույթով կտրուկ տարբերվում են միջուկային էներգիայի անջատման մեզ արդեն հայտնի պրոցեսներից, հատկապես՝ ջերմամիջուկային ռեակցիաներից: Այն փաստը, որ անջատումը կատարվում է բռնկման նման, խոսում է աստղի ընդերքից արտաքին շերտեր զանգվածների տեղափոխման մասին, որոնք գտնվում են միջուկային–անկայուն վիճակներում: Մյուս կողմից, քանի որ այդ երեւույթները դիտվում են երիտասարդ աստղերի մոտ, բնական է ենթադրել, որ դուրս մղվող զանգվածը կազմված է նախաստղային գերխիտ նյութից, այսինքն՝ իրենից ներկայացնում է մեզ մինչ այժմ անհայտ վիճակի բացարձակապես հատուկ մատերիա»:*

«Աստղային բռնկումները վիթխարի իրադարձություն են, իրապես «աստղային»՝ իրենց մասշտաբներով, իրադարձություն, որ իր դրսեւորման յուրաքանչյուր ակտում ընդգրկում է աստղի շրջակայքի հսկայական տարածություն եւ զարգանում է անհերեւակայելի արագությամբ: Իրադարձություն, որի հետեւանքները կրկնվում են զարմանալի հաստատունությամբ եւ միաժամանակ ամենատարբեր դրսեւորումներով՝ անընդհատ առաքման տեսքով, ուժեղ էմիսիոն գծերով, հզոր ռադիոճառագայթմամբ, ռենտգենյան ֆոտոնների արձակումով, տարրական մասնիկների ազատումով եւ այլն: Իրադարձություն, որ տեղի է ունենում շատ հաճախ եւ բացառապես բուռն՝ աստղերի ձեւավորման ու զարգացման սկզբնական շրջաններում, հանդարտվում է նրանց ծերացմանը զուգընթաց եւ այդ պատճառով էլ ունի հստակ արտահայտված կոսմոգոնիկ նշանակություն:

… Բռնկվող աստղերի ցանկացած կուտակումը սահմանափակ ծավալում պետք է դիտվի միաժամանակ՝ նաեւ որպես աստղառաջացման օջախ»:

«Աստղի՝ ավելցուկային զանգվածից ազատվելու հիմնական միջոցը, գազային նյութի սպառմամբ կամ ժայթքմամբ, կոսմոգոնիայում ճանաչված է որպես յուրաքանչյուր աստղի ձեւավորման եւ էվոլյուցիայի առաջին պահանջ: Երկրորդ, ոչ պակաս կարեւոր պահանջն այն է, որ աստղի էվոլյուցիան չի կարող ընթանալ այլ կերպ, քան ավելցուկային էներգիայից ազատումը, եւ դա իրականանում է բացառապես բռնկումների ձեւով. անընդատ՝ աստղի զարգացման վաղ շրջաններում, եւ ինքնաբուխ՝ ուշ շրջաններում»:

«Իմ կողմից առաջ քաշած կոնցեպցիան տիեզերական ճառագայթները դիտարկում է որպես աստղառաջացման պրոցեսի պրոդուկտներից մեկը: Տիեզերական ճառագայթների գոյության փաստը, ամենայն հավանականությամբ, դժվար է մեկնաբանել այլ կերպ, քան ցուցիչ, որ Գալակտիկայում աստղերի ու նրանց համակարգերի ծնունդն ու ձեւավորումը շարունակվում են նաեւ այժմ:

Աստղասփյուռները, որ Գալակտիկայում ցրված են ավել կամ պակաս հավասարաչափ, դառնում են տիեզերական ճառագայթների հսկա արագացուցիչներ: Դրանք, ըստ էության, հանդես են գալիս՝ որպես աստղասփյուռներում աստղերի ծննդի ու ձեւավորման «վկաներ»»:

Նկարում՝ Գրիգոր Գուրզադյանի ծաղիկներից: *«Գրիգոր Գուրզադյանը հոգեւոր մտերմություն է փնտրում երկնային ու երկրային ծաղիկների միջեւ՝ ստեղծելով երկրային ծաղիկների զարմանահրաշ պատկերներ»*): (Հովիկ Հովեյան)

171) Անտեսանելին

«Մարդոց աչքերին անտեսանելի,
Թե՛ ամպերի մեջ պիտի
ես հանգչեմ»:

Հովհաննես Թումանյան

Գիտնականները զարմանքով համոզվել են, որ բոլոր մարմինները (առանց բացառության) արձակում են անտեսանելի ինֆրակարմիր ճառագայթներ:

Եթե մեր աչքերը տեսնեին անտեսանելին, ապա մենք կհայտնվեինք լուսարձակող առարկաների տարօրինակ աշխարհում. կարծես մեր շուրջբոլորը անընդհատ կվառվեին հրավառության կայծեր: Անտեսանելի ինֆրակարմիր ճառագայթները, որոնք Վիլյամ Հերշելը հայտնագործել է Արեգակի սպեկտրում, պարզվում է, *«ապրում»* են Երկրի վրա, շրջապատելով մեզ բոլոր կողմերից: Պարզվում է, մեր մարմնի մակերեւույթի յուրաքանչյուր բջիջ արձակում է ինֆրակարմիր ճառագայթներ: Եվ ինչքան արագ ենք շարժվում, այնքան ավելի շատ ինֆրակարմիր ճառագայթներ են արձակվում մակերեւույթից, օգնելով մաշկին հովանալ եւ պահպանել մարմնի ջերմաստիճանը բանական, օրգանիզմի համար հարմար սահմաններում:

Անտեսանելի ինֆրակարմիր ճառագայթները ծագում են հավասարակշռության դիրքերի շուրջը ատոմների ու մոլեկուլների շարժման շնորհիվ: Ցանկացած մոլեկուլ մշտապես շարժումներ է կատարում՝ աջ-ձախ, վերեւ-ներքեւ՝ պայմանավորված նյութի ներսում քիմիական կապերով: Այդ շարժումները կարող են դադարել միայն բացարձակ զրո ջերմաստիճանի դեպքում(-273^C), եւ միայն այդ ժամանակ կանհետանա անտեսանելի ինֆրակարմիր ճառագայթումը: Բայց, ինչպես հետեւում է ջերմադինամիկայի III սկզբունքից, այդ բանը երբեք տեղի չի ունենա…

Մարմնի տաքացումը հանգեցնում է ատոմա-մոլեկուլային շարժումների արագությունների մեծացմանը, եւ անտեսանելի ճառագայթման էներգիան սկսում է կտրուկ աճել:

Եթե մենք հետեւենք նիքրոմե պարույրով աշխատող էլեկտրական սալիկի տաքացմանը, կնկատենք, որ նախ պարույրը սկսում է տաքացնել՝ արձակելով անտեսանելի ինֆրակարմիր ճառագայթներ, այնուհետեւ առաջանում են ավելի ջերմ կարմիր, դեղին եւ վերջապես, կուրացուցիչ սպիտակ լուսարձակումները: Դա նշանակում է, որ մարմնի արձակած ճառագայթների սպեկտրը, տաքացմանը զուգընթաց, տեղաշարժվում է դեպի տեսանելի ճառագայթների կողմը:

Եթե մեզ հաջողվի Երկրի վրա նյութը տաքացնել մինչեւ 5500-6000^C, օրինակ՝ էլեկտրական աղեղի միջոցով, ապա այդպիսի աղբյուրի սպեկտրը գրեթե ճշտորեն կկրկնի Արեգակի սպեկտրը:

Եթե նավահանգստի փարոսի լամպի ապակե թաղանթը ծածկենք սեւ ֆիլտրով, որ բաց են թողնում միայն ինֆրակարմիր ճառագայթներ, ապա ափը եւ ծովը կողողվեն միայն անտեսանելի ճառագայթների հոսքով: Եթե նավի վրա սարքեր լինեն, որոնք անտեսանելի ճառագայթները կվերածեն տեսանելիների, ապա նավերը ափի հետ կարող են *«խոսել»* ինֆրակարմիր ճառագայթների անձայն ու աննկատելի լեզվով, եւ այդ խոսակցությանը չեն կարող խառնվել ուրիշները: Փոխակերպող սարքերում անտեսանելի ճառագայթները ընկնում են լուսազգայուն շերտի վրա, նրանից դուրս են մղում էլեկտրոններ, էլեկտրոնները թռչում են դեպի հատուկ լուսարձակող նյութով ծածկված էկրան, որին ստիպում են լուսարձակել: Անտեսանելի ճառագայթները դառնում են տեսանելի:

Հենց այդ սկզբունքով էլ կառուցված է օպտիկական պահպանությունը՝ զինված ուժերում, թանգարաններում, այլ տարածքներում: Եթե գիշերային ժամին ինչ-որ մեկի մարմինը կհատի անտեսանելի ճառագայթը, կաշխատի տագնապի ազդանշանը: Աշխատող ցանկացած տեխնիկա ավելի ջերմ է շրջապատի առարկաներից, իսկ ջերմային դիտման սարքերը նկատում են աստիճանի մի քանիերորդ մասի չափով ջերմաստիճանային տարբերությունները: Գիշերադիտարկման սարքը նկատում է թշնամու մարդկանց ու տեխնիկայի շարժը՝ որսալով այն թույլ ինֆրակարմիր ճառագայթները, որ արձակում են նրանք:

Մարդու մարմնից արձակվող ջերմությունը, պարզվում է, բավարար է, որ ինքը ցրտի ժամանակ չսառչի: Ստացվում է, որ տաքանում ենք՝… տալով մեր սեփական ջերմությունը: Պետք է ընդամենը հագնել կոստյում-կոմբինեզոն՝ ալյումինե փայլաթիթեղից միջադիրով, որը հետ կանդրադարձնի մարդու մարմնի ինֆրակարմիր ճառագայթումը: Այդպիսի *«կոստյումի»* դեր Երկրի համար կատարում է մթնոլորտը: Այն թափանցիկ է Արեգակի ճառագայթների համար, բայց գրեթե ամբողջությամբ կլանում է Երկրի սեփական անտեսանելի ջերմային ճառագայթումը եւ մոլորակի համար ապահովում կյանքի համար անհրաժեշտ ջերմաստիճանային պայմաններ:

Այսպիսով, մթնոլորտը եւ՝ թթվածնի աղբյուր է, եւ՝ *«վերմակի»* դեր է կատարում, եւ՝ էկրանավորում է տիեզերքից եկող վտանգավոր ճառագայթներ:

Հ. Գ.- էտյուդների այս փունջը, որ աստղագիտական ուղղվածություն ունի, հեղինակները նվիրում են Գրիգոր Գուրզադյանի ծննդյան 100 –ամյակին:

Զարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Սիդա ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Ոսկերչություն»* (1 դրույք), *«Էլեկտրական սարքերի, մեքենաների եւ ապարատների փորձարկում»* (1 դրույք), *«Հրուշակեղենի տեխնոլոգիա»* (1 դրույք) առարկաների դասավանդող վարպետների թափուր տեղերի համար:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում («Ձեւ 1»),

- Կրթության մասին հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)(բնօրինակը եւ պատճենը),

- Անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

- Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

- Ինքնակենսագրություն («Ձեւ 4»),

- 1 լուսանկար՝ 3x4 չափի:

- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ(բնօրինակը եւ պատճենը),

- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 23-ից մինչեւ դեկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***դեկտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին,*** *«Երեւանի արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ում. հասցեն՝ ք. Երեւան, Նոր Նորքի 4-րդ զանգված, Գյուլիքեւխյան 20:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 63-40-70 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«Ֆիզիկական կուլտուրա»* (660 ժամ), *«Սննդի տեխնոլոգիա»* (Պահածոների եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա, 830 ժամ), *«Օխախոտի աճեցման եւ վերամշակման տեխնոլոգիա»* (400 ժամ) առարկաների դասախոսի թափուր տեղերի համար:

Դասախոսի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Պահանջվող փաստաթղթերի ցանկը՝

1. դիմում,

2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3. անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5. ինքնակենսագրություն,

6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 23-ից մինչեւ դեկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***դեկտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին,*** Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում, հասցեն՝ Արարատի մարզ, ք. Մասիս, 3-րդ թաղ., Հերացու 21:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0236) 4-44-17 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի *«Գանձաքարի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 23-ից մինչեւ դեկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***դեկտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Տավուշի մարզի Գանձաքարի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Գանձաքար, փ. 28, շ. 4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 20-57-07 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի *«Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան հ. 1 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի կերպարվեստի (5 դասաժամ), մաթեմատիկայի (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***նոյեմբերի 23-ից մինչեւ դեկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***դեկտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան հ. 1 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Վաղարշապատ, Բաղրամյան 12:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0231) 5-29-55 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Այգեպատի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (7 դասաժամ), մաթեմատիկայի (19 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

